«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

Երևան – 2021

ՆԱԽԱԲԱՆ

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից:

Հավատարմագրման գործընթացը ֆինանսավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարության կողմից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:Զեկույցը պարունակում է Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ……..2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ…….....4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ……4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ…….....12

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ……...12

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ……..…...12

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ……..16

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ…….....16

I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ……...……....18

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ……21

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ……..25

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ…….....31

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ…….....36

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ……...39

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ……...43

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ……47

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ……..…..49

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ……...52

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ……56

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ……57

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ……..……....58

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ……...60

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ…….....…...62

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ……..63

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ……...65

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ԿՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է ««Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խմբի կողմից[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի առաքելությունն է

- ապահովել որակյալ մասնագետների պատրաստումը՝ տնտեսության ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան,
- ապահովել կրթական ծառայությունների ճկունությունը աշխատաշուկայի փոփոխությունների նկատմամբ,
- ապահովել կրթական բարձրակարգ նվաճումների տարեցտարի արագացող աճը,
- զարգացնել տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժը,
- ստեղծել օպտիմալ պայմաններ արդյունավետ և որակյալ ուսուցման համար՝ ցանկացած տեղում և ցանկացած ժամանակ (էլեկտրոնային ուսուցում):

Փորձագիտական խումբը հաշվի է առել ԿՏՊՔ-ի, որպես միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, կապերը ԿԳՄՄՆ և, մասնավորաբար, ՄԿՈՒԶԱԿ-ի հետ, ինչպես նաև նշանակությունը Կոտայքի մարզի համար: Միաժամանակ, փորձագիտական խումբը հաշվի է առել այն հանգամանքը, որ ԿՏՊՔ-ն առաջին անգամ է անցնում հավատարմագրման գործընթացով:

ԿՏՊՔ-ն կարևոր դերակատարություն ունի տարածաշրջանում, և՛ որպես բուհերում շարունակական կրթության ապահովման օղակ, և՛ որպես տաածաշրջանի աշխատաշուկայի միջին մասնագիտությամբ պայմանավորված պահանջարկը լրացնելու առումով, սակայն ԿՏՊՔ-ի ՄԿԾ-ների արդյունքներից ակնկալիքներն ու պատկերացումները շահակիցների կողմից տարբեր են:

ԿՏՊՔ-ում կառավարման համակարգը չի հիմնվում առաքելության և նպատակների իրականացման երկարաժամկետ և կարճաժամկետ հստակ պլանավորումների, գործընթացների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, որակի կառավարման սկզբունքի վրա: Առկա չէ ռազմավարական կառավարման մեխանիզմ: Թույլ է ատահայտված ներքին և արտաքին շահակիցների (մասնավորաբար՝ գործատուների) ներգրավվածությունը գործընթացներում:

ԿՏՊՔ-ի ՄԿԾ-ները կազմված են ՈԱՇ-ին համապատասխան և ընդհանուր առմամբ հիմնված են ՊԿՉ-ով նախատեսված վերջնարդյունքների վրա: Նկատելի են քայլերն՝ ուղղված ըստ ուսումնառության ակնկալվող արդյունքների դասավանդման և գիտելիքի գնահատման մեթոդների համապատասխան ընտրություն ապահովելուն: Հիմնական թույլ կողմն այն է, որ առկա է աշխատաշուկայում հստակ տեղի և դերի խնդիր և այդ մասին շահակիցների տարբեր

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. Փորձագիտական խմբի անդամների համառոտ ինքնակենսագրականները:

պատկերացումներ, ինչպես նաև բացակայում է համեմատական վերլուծության իրականացման գործընթացը և շարժունության հնարավորությունները: Միաժամանակ գործատուների ներգրավվածությունը ՄԿԾ-ների մշակման, իրականացման և բարելավման գործընթացներում բավարար չէ:

Քոլեջի տարբեր օղակների կողմից տարաբնույթ աջակցություն է տրամադրվում ուսումնառողներին ուսումնական և այլ գործընթացների հետ կապված, սակայն դրանք ոչ միշտ են կանոնակարգված, ուսանողները հաճախ հստակ չգիտեն իրենց հնարավորությունների շրջանակը:

Դասախոսական կազմը համալրված է ինչպես տարիների դասավանդման փորձառությամբ, այնպես էլ գործնական փորձառությամբ երիտասարդ դասավանդողներով, ովքեր հիմնականում ապահովում են ՄԿԾ-ներով պահանջվող վերջնարդյունքները: Սակայն առկա են դասախոսական կազմի կատարելագործման ապահովման հետ կապված խնդիրներ, առկա չեն կարիքներից բխող միջոցառումներ և համագործակցություններ (մասնավորաբար՝ գործատուների հետ համագործակցության նման շրջանակները բացակայում են): Բացակայում են դասախոսների առաջընթացի ապահովման մեխանիզմները: ԿՏՊՔ-ի դասախոսական, վարչական և ՈւՕ կազմերը ընդհանուր առմամբ կարող են ապահովել հիմնական նպատակների իրականացում, սակայն անհրաժեշտ է նրանց գործունեությունը հստակ փոխկապակցել և բխեցնել նպատակներից, ապահովել գործունեության արդյունավետության գնահատում, ինչը կապահովեր ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործում, ինչպես նաև որակի ու արդյունավետության բաձրացում:

Հետազոտության ոլորտում ԿՏՊՔ-ն դեռևս չունի ձևավորված նպատակներ, որոնց իրականացմանն ուղղված գործունեությունը կկարողանար խրախուսել: Հստակ չեն հետազոտության և ուսումնառության միջև կապերը, այս առումով նպատակային չեն նաև գործատուների հետ համագործակցության շրջանակները, չկան միջազգային փորձի ուսումնասիրման մոտեցումներ: Միայն դասախոսների առանձին անձնական նախաձեռնություններն են ապահովվում որոշակի ուսումնական ձեռնարկների տեսքով արդյունքներ, կամ ուսանողների պրակտիկաների հաջող փորձեր: Հետազոտության ոլորտում նման մոտեցումը վնասում է նաև ուսումնական գործընթացին:

ԿՏՊՔ-ն իրականացնում է տարբեր մասնագիտական կրթական ծրագրեր, որոնք բացի լսարանային կամ լաբորատոր պայմաններից պահանջում են այլ ռեսուրսներ ևս՝ համապատասխան միջավայր, սարքավորումներ և այլն: Քոլեջը բավական հագեցրել է սեփական ռեսուրսները, միաժամանակ որոշ կրթական ծրագրերի ուղղությամբ հաջողությամբ կիրառվում են գործատուների ռեսուրսները: Սակայն դեռևս առկա են կրթական ծրագրեր, որոնց շրջանակում ռեսուրսները բավարար չեն և այդ բացը չի լրացվում գործատուների ընձեռած հնարավորություններով, քանի որ գործատուներ չկան: Դեռևս թերի են ռեսուրսների կարիքների վերհանման և ըստ ռազմավարության պլանավորման, ինչպես նաև դրանց կիրառման արդյունավետությունը գնահատող մեխանիզմները:

Հասարակական պատասխանատվության ոլորտում քոլեջի գործունեությունը, չնայած որոշ թերությունների, բավական հետաքրքիր արտահայտություն է գտել: Արտաքին հաշվետվողականությունը գլխավորապես պայմանավորվում է ՄԿՈՒԶԱԿ-ի հետ ունեցած կապերով, փորձում են հասարակության հետ կապերը պահել տարբեր ձևերով՝ միջոցառումներ, համագործակցություններ, կարճաժամկետ ծրագրեր, կայքէջ, սոցիալական էջ և այլն: Սակայն այդ մոտեցումները գնահատելու և զարգացնելու անհրաժեշտություն ունեն:

Չնայած արտաքին կապերի և միջազգայնացման հավակնոտ նպատակներին, այս ուղղությամբ ձևավորված չէ հստակ քաղաքականություն, առկա չեն համագործակցության հաստատման և զարգացման ինստիտուցիոնալ կապեր, որոնք կբխեին ռազմավարական և կրթական ծրագրերի նպատակներից: Կարևոր է, որ քոլեջը հստակ գնահատի իր զարգացման առաջնահերթությունները թե՛ մարդկային ռեսուրսների կատարելագործման, թե՛ նյութական ռեսուրսների ձեռքբերման կամ դրանք կիրառելու հնարավորթություններն ընդլայնելու տեսանկյունից, և իր համագործակցության շրջանակները ձևավորի ու զարգացնի այդ հենքով՝ այդ համագործակցության մեջ առանձնակի տեղ հատկացնելով գործատուներին:

Այնուամենայնիվ, քոլեջում առկա է անձնական համագործակցության հենքով հաջող փորձ, որը հանգեցրել է քոլեջի զարգացմանը:

Որակի ապահովման համակարգը ԿՏՊՔ-ում դեռևս ձևավորման փուլում է և էական ազդեցություն չունի քոլեջի օղակների և կառուցվածքային միավորների գործունեության և քոլեջի գործընթացների վրա և չի երաշխավորում դրանց համընթաց բարելավումն ու առաջընթացը:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1) Տարածաշրջանում զբաղեցրած առանձնահատուկ տեղը և դրանից բխող հատուկ առաքելությունը միջին մասնագիտական կրթության ոլորտում:
2) Գործատու-աշխատակից հարաբերությունների կանոնակարգվածությունը:
3) Մասնագիտական կրթական ծրագրերի բխեցումը ՊԿՉ-ներից, որոնցում առկա է բավական մանրամասն նկարագիր՝ ըստ շնորհվող որակավորումների և ակնկալվող ուսումնառության արդյունքների:
4) Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված մղումները՝ ապահովելու դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացների բարելավում:
5) Ուսանողներին տարբեր օղակների կողմից տրամադրվող աջակցությունը՝ ուղղված կրթական և այլ կարիքների բավարարմանը:
6) Դասախոսական կազմի ընտրության վարվող քաղաքականությունը՝ ապահովելու մանկավարժական փորձառությամբ և գործնական հմտություններով աշխատակիցներով:
7) Ուսանողների կողմից կատարված հետազոտության լավ փորձի առկայությունը:
8) Անհրաժեշտ ուսումնական միջավայր ապահովող տարածքի և տարբեր տեխնիկական միջոցների առկայությունը:
9) ՄԿՈՒԶԱԿ-ի հետ յուրահատուկ կապերով պայմանավորված արտաքին հաշվետվողականության գործող մեխանիզմները:
10) Գործընթացները հնարավորինս թափանցիկ դարձնելու ձգտումը:
11) Հասարակությանը գիտելիքի և արժեքների փոխանցման մեխանիզմների զարգացմանն ուղղված մոտեցումները:
12) Տարածաշրջանային և միջազգային համագործակցության արժևորումը:
13) ԿՏՊՔ-ի աշխատակիցների որակի ապահովման գործընթացների վերաբերյալ իրենց գիտելիքների ու հմտությունների զարգացման ձգտումը:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1) Նպատակների ձևավորմանը շահակիցների շատ թույլ ներգրավվածությունը:
2) Նպատակների իրականացման պլանավորման և գնահատման մեխանիզմների բացակայությունը:
3) Ռազմավարական կառավարման և գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմների բացակայությունը:
4) Մասնագիտական կրթական ծրագրերի առաջավոր փորձի ուսումնասիրման մեխանիզմների բացակայությունը:
5) Կարողությունների և հմտությունների ձևավորման և գնահատման մոտեցումների և մեթոդների (մասնավորաբար՝ հանձնարարականների) խիստ անկատարությունը:
6) Մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման ոչ հստակ մեխանիզմներ և գործընթացների ոչ համակարգվածությունը:
7) Ուսանողների՝ հետազոտական աշխատանքներում խիստ թույլ ներգրավվածությունը:
8) Դասախոսական կամզի մասնագիտական առաջընթացի և կատարելագործումն ու զարգացումը խախուսող մեխանիզմների բացակայությունը:
9) Հետազոտական ոլորտում հետաքրքրությունների ու հավակնությունների բացակայությունը, գիտահետազոտական գործունեության խրախուսման մեխանիզմների բացակայությունը:
10) Հետազոտության և ուսումնառության միջև կապերի անհստակությունը:
11) Ռեսուրսների ձեռքբերման պլանավորման և ռազմավարական և կրթական ծրագրերի նպատակների փոխկապակցման հստակ մեխանիզմների բացակայությունը:
12) Ներքին հաշվետվողականության մեխանիզմների խիստ անկատարությունը և ոչ վերլուծական լինելը:
13) Արտաքին կապերի ուղղության անհստակությունը, ինստիտուցիոնալ կապերի բացակայությունը:
14) Արտաքին կապերի և գործատուների հետ համագործակցության նեղ շրջանակը:
15) Առաջավոր փորձի ուսումնասիրման մեխանիզմների ու նախադեպերի, ինչպես նաև փոխանակման ծրագրերի բացակայությունը:
16) Որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի ոչ լիարժեքությունը:
17) Որակի ապահովման համակարգի քոլեջի օղակների և կառուցվածքային միավորների գործունեության և քոլեջի գործընթացների վրա ազդեցության խիստ պակասը:
18) Տվյալների հավաքագրման ու վերլուծության մեխանիզմների ոչ արդյունավետ լինելը:

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Առաքելությունը և նպատակները

1. Հստակեցնել ԿՏՊՔ-ի տեսլականը, առաքելությունն ու առաջնահերթությունները՝ համապատասխանեցնելով ԿՏՊՔ առանձնահատկություններին:
2. ԿՏՊՔ-ի նպատակների սահմանման գործընթացում ներգրավել արտաքին շահակիցների՝ հատկապես գործատուների առավել լայն շրջանակ՝ ըստ համապատասխան ՄԿԾ-ների:

3. Ներդնել նպատակների իրականացման պլանավորման և գնահատման մեխանիզմներ ու գործիքակազմ, ինչը թույլ կտա գործընթացները դարձնել իրագործելի, իսկ իրագործման ընթացքն ու արդյունքը հստակ գնահատելի հստակ ցուցիչների միջոցով:

Կառավարումն ու վարչարարությունը

4. Ներդնել ռազմավարական կառավարման մոտեցումներ՝ կառուցվածքն ու ստորաբաժանումների գործունեությունը պայմանավորեցնելով ռազմավարական ծրագրով, միաժամանակ պլանավորման փուլում նկատի ունենալով ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսների հնարավորությունները, սահմանելով ցուցիչներ, պատասխանատուներ, կատաման ժամանակահատված:
5. Ներդնել ստորաբաժանումների և քոլեջի կարճաժամկետ պլանավորման հաշվետվողականության մոտեցումներ՝ միտված երկարաժամկետ պլանավորման իրականացմանը՝ ապահովելով արդյունավետության գնահատման ինստիտուցիոնալ մեխանիզմներ և առաջնորդվելով որակի կառավարման սկզբունքով:
6. Ներդնել քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրման և ռիսկերի կառավարման մեխանիզմներ:
7. Ներդնել ԿՏՊՔ-ի քաղաքականությունների, ընթացակարգերի ու գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ առաջնորդվելով որակի կառավարման սկզբունքով:
8. Կանոնակարգել տեղեկատվության կառավարման գործընթացը՝ ապահովելով դրա արդյունավետության գնահատում:

Մասնագիտության կրթական ծրագրերը

9. Ապահովել կրթական ծրագրերի բովանդակության ճկուն փոփոխություն՝ առաջնորդվելով աշխատաշուկայի արդի պահանջներով, առաջավոր փորձով:
10. Հստակեցնել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականությունը՝ ապահովելով դասախոսների կատարելագործում և ճկուն հարմարվողականություն կրթական տարբեր միջավայրերի (նաև՝ հեռավար) համար:
11. Ներդնել գնահատման համակարգի արդյունավետության գնահատման և բարելավման մեխանիզմներ՝ միտված ուսանողի առաջընթացի ապահովմանը, ինչպես նաև ներդնել ուսանողներին պարբերաբար հետադարձ կապ տրամադրելու մեխանիզմը[2]:
12. Ներդնել համեմատական վերլուծության և առաջավոր փորձի ուսումնասիրման մոտեցումներ՝ զարգացնելով դասախոսների և ուսանողների շարժունության հնարավորությունները, ինչը կնպաստի կատարելագործմանը:
13. Կանոնակարգել ՄԿԾ-ների մշակման, մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման գործընթացները՝ ապահովելով ներքին և արտաքին շահակիցների ակտիվ ներգրավվածություն և նրանց իրազեկ դարձնելով ուսումնառության արդյունքներին ու աշխատաշուկայում հստակ տեղի վերաբերյալ:

[2] Փոփոխվել է քոլեջի դիտարկումների արդյունքում

Ուսանողները

14. Մշակել մեխանիզմներ ուսանողների ներգրավածությունը Կարիերայի ստորաբաժանման կողմից իրականացվող աշխատանքներում մեծացնելու ուղղությամբ:
15. Հստակեցնել ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմները և իրականացնել ուսանողների հետ կայուն հետադարձ կապի ապահովում:
16. Կանոնակարգել խորհրդատվական ծառայությունների մատուցման գործընթացը, մշակել և ներդնել այդ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:
17. Ներդնել խրախուսման մեխանիզմներ ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

18. Կանոնակարգել ամբիոնների վարիչների նշանակման և ՈւՕ կազմի ձևավորման մեխանիզմները, որոնք կնպաստեն ուսումնական գործընթացի ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ նպատակների ու գործընթացների արդյունավետ իրականացմանը:
19. Հստակեցնել դասախոսական, ՈւՕ և վարչական կազմերի գործունեության գնահատման մեխանիզմները, ապահովել դրանցից բխող տեղեկատվության բազմակողմանի վերլուծություն՝ նպաստելով նրանց կարիքների, խնդիրների վերհանմանն ու գործունեության բարելավմանը՝ ուղղված ՄԿԾ և ՌԾ նպատակների արդյունավետ իրագործմանը:
20. Ներդնել դասախոսական կազմի առաջընթացի ապահովման մեխանիզմներ, խրախուսել և նպաստել դասախոսների կատարելագործմանն ուղղված գործունեությունը՝ ներգրավելով գործատուների ռեսուրսներն ու հնարավորությունները:
21. Ապահովել, ըստ տարբեր մոդուլների, համապատասխան մասնագետներ՝ նպաստելով ԿԾ-ի վերջնարդյունքների լիարժեք ձևավորմանը:

Հետազոտությունը և զարգացումը

22. Հստակեցնել հետազոտության ոլորտում հավակնություններն ու ուղղությունները՝ դրանք փոխկապակցելով ուսումնական ծրագրերի և դրանց բարեփոխման, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջների հետ:
23. Ներդնել դասախոսական կազմի հետազոտական գործունեության ծավալման քաղաքականություն և ընթացակարգեր՝ կապակցելով մասնագիտական առաջընթացի հետ:
24. Մշակել և ներդնել մեխանիզմներ, որոնք կապահովեն դասախոսների իրազեկվածությունը հետազոտական (նաև՝ միջազգային) նախագծերի վերաբերյալ՝ խրախուսելով նախագծերում ներգրավվածությունը:
25. Հստակեցնել կուրսային, դիպլոմային, նախագծային աշխատանքներին, պրակտիկաներին ներկայացվող պահանջները՝ ապահովելով դրանց միջոցով վերլուծական, հետազոտական կարողությունների և հմտությունների ձեռքբերումը:

26. Ընդլայնել գործատուների հետ համագործակցության շրջանակները (և՛ ներգրավվածության, և՛ բովանդակային իմաստով)՝ ապահովելով դրանց նպատակայնությունը, ռազմավարական առաջնահերթությունների հետ փոխկապակցումը և դասախոսական ու ուսանողական համակազմերի համար հետազոտական գործունեության ծավալման հնարավորությունների ընձեռումը:
27. Ներդնել միջազգային փորձի ուսումնասիրման մեխանիզմներ՝ դրանք փոխկապակցելով հետազոտական հավակնությունների հետ:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

28. Ներդնել ֆինանսական ռեսուրսների բաշխման մեխանիզմներ, որոնք կբխեն ՌԾ և ՄԿԾ-ների առաջնահերթություններից ու նպատակներից:
29. Զարգացնել ֆինանսական բազմազանեցման մեխանիզմներ՝ ուղղված ՄՈՒՀ-ի ֆինանսական անկախությանն ու զարգացմանը՝ կիրառելով նաև գործատուների հետ համագործակցության շրջանակները:
30. Ներդնել ներքին շահակիցների ռեսուրսային ապահովածության կարիքների վերհանման մեխանիզմներ:
31. Ներդնել ռեսուրսների հասանելիության, կիրառելիության և արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ:
32. Ներդնել փաստաթղթաշրջանառության ճկուն համակարգ, որը գործարկելի կլինի տարբեր միջավայրերում՝ այդ թվում հեռավար:

Հասարակական պատասխանատվությունը

33. Ներդնել ներքին և արտաքին հաշվետվողականության հստակ համակարգեր, որոնք կապահովեն բոլոր գործընթացների թափանցիկությունը:
34. Զարգացնել հասարակությանը տեղեկատվության տրամադրման և հետադարձ կապի մեխանիզմները (մասնավորաբար՝ քոլեջի կայքէջը և ֆեյսբուքյան էջերը)՝ ուղղորդվելով ներքին և արտաքին շահակիցների կարիքներով:
35. Ներդնել տեղեկատվության հասանելիության, թափանցիկության և հետադարձ կապի արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

36. Հստակեցել արտաքին կապերի ուղղությունն ու քաղաքականությունը՝ այն պայմանավորեցնելով քոլեջի առաջնահերթություններով ու կարիքներով, միաժամանակ ապահովելով գործընթացների իրականացման հստակ պլանավորում, այդ թվում համապատասխան ռեսուրսների առումով:
37. Ապահովել արտաքին համագործակցության ինստիտուցիոնալ կապեր, այդ թվում՝ անձնական կապերը վերածելով ինստիտուցիոնալի:
38. Գործատուների հետ համագործակցության շրջանակները համապատասխանեցնել իրականացվող կրթական ծրագրերին՝ ընդլայնելով և խորացնելով դրանց բովանդակությունը, որը կապահովի ուսանողների և դասախոսների գործնական կարողությունների ու հմտությունների, ինչպես նաև փորձի փոխանակման անփոխարինելի հարթակ:

39. Ընդլայնել դասախոսների փորձի փոխանակման հնարավորությունները, այդ թվում՝ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ազգային (միջազգային) հաստատությունների հետ համագործակցության շրջանակներում:
40. Մշակել և ներդնել առաջավոր (տեղական կամ միջազգային) փորձի ուսումնասիրման և դրանց նպատակային կիրառման մեխանիզմներ:
41. Ապահովել միջազգային փոխանակման և հետազոտական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական դաշտ և խրախուսել ուսանողների և դասախոսների միջազգայնացման ուղղությամբ համապատասխան գործունեությունը:
42. Ներդնել արտաքին համագործակցությանն ուղղված գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Որակի ներքին ապահովման համակարգը

43. Ապահովել որակի ապահովման ներքին համակարգը կարգավորող փաստաթղթային հենքը՝ հստակեցնելով տարբեր օղակների դերակատարություններն ու պատասխանատվությունները որակի ապահովման ներքին համակարգում՝ առաջնորդվելով քոլեջի որակի ներքին ապահովման առանձնահատկություններով:
44. Ներդնել որակի շարունակական բարելավման մեխանզիմներ քոլեջի բոլոր ոլորտների համար, ինչպես նաև բարելավել տվյալների հավաքագրման ու վերլուծության մեխանիզմները:
45. Որոշակիացնել որակի ապահովման կենտրոնի առաքելությունը, նպատակը և գործառույթների շրջանակը՝ դրանք համապատասխանեցնելով մինյանց և առկա մարդկային ու նյութական ռեսուրսների հնարավորություններից, ինչպես նաև բխեցնելով որակի մշակույթի տարածումն ապահովելու առաջնահերթությունից:
46. Ապահովել ներքին և արտաքին շահակիցների՝ որակի ապահովման գործընթացներում ներգրավվածությունը՝ մշակելով և ներդնելով հստակ մեխանիզմներ:
47. Մշակել և ներդնել որակի ապահովման համակարգի արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ միաժամանակ առաջնորդվելով առաջավոր փորձի լավագույն օրինակների տեղայնացմամբ:
48. Ներդնել որակի ապահովմանն ուղղված ընթացիկ գործընթացների վերլուծությունների, արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ զարգացնելով հաշվետվություններում վերլուծական բաղադրիչը, ապահովել արդյունքների հասանելիությունը ներքին և արտաքին շահակիցներին:

_____

Արմենուհի Սարգսյան
Փորձագիտական խմբի ղեկավար

3 փետրվարի 2021թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից.

1. **Արմենուհի Սարգսյան,** Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ,
2. **Հակոբ Գալստյան**, Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջի ճարտարագիտական ամբիոնի վարիչ,
3. **Քրիստինե Մարտիրոսյան,** Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջի ծրագրավորման դասախոս,
4. **Զուլյա Բաղալյան,** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի հաշվապահական հաշվառում մասնագիտության ուսանողուհի:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ տնօրենի օգնական Անահիտ Տերտերյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում համակարգողը ստորագրել են գաղտնիության պարտավորագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԿՏՊՔ-ն 10.07. 2020թ.-ին ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարություն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (23.07. 2020թ.) ՄՈՒՀ-ի, ՈԱԱԿ-ի և ԿԳՄՍ նախարարության հետ կնքվել է եռակողմ պայմանագիր:

COVID 19 համավարակով և պատերազմական իրավիճակով պայմանավորած ՄՈՒՀ-ը ժամանակացույցով նախատեսված ժամկետներից 2 շաբաթ ուշացումով, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն տարբերակով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Քոլեջի ինքնավերլուծությունն իրականացրել է ՄՈՒՀ-ի տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:

Ինքնավերլուծություն

Քանի որ ԿՏՊՔ-ն առաջին անգամ էր անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացով և գործընթացն իրականացնելը քոլեջի համար բարդ էր, այդ պատճառով ՈԱԱԿ-ը որոշակի աշխատանքներ է իրականացրել ՄՈՒՀ-ի հետ՝ նախապատրաստելով նրան ինքնավերլուծության ներկայացման և հավատարմագրման գործընթացին: Հունիս ամսին ԿՏՊՔ-ն 2 շաբաթվա ընթացքում իրականացրել է SWOT վերլուծություն հավատարմագրման 10 չափանիշներին համապատասխան: SWOT վերլուծության ներկայացումից հետո ՄՈՒՀ-ն առաջադրել է 2 աշխատակից, որոնց հետ միասին ՈԱԱԿ աշխատակիցները 1 ամիս դիտարկել են քոլեջի կողմից ներկայացված SWOT վերլուծությունը, դուրս են բերել հիմնական խնդիրները:

Աշխատակիցներն այդ ընթացքում ուղղորդվել են, թե SWOT վերլուծությունն ինչպես պետք է կատարել և ինքնավերլուծության ընթացքում քոլեջը հատկապես ինչին պետք է ուշադրություն դարձնի չափանիշների շրջանակում: SWOT վերլուծության դիտարկումից հետո քոլեջի աշխատակիցները՝ որպես փորձագետներ, ՈԱԱԿ աշխատակիցների հետ միասին սույն թվականի հուլիսի 25-ին իրականացրել են մշտադիտարկում ԿՏՊՔ-ում:

ԿՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 31.10. 2020թ.-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է ՄՈՒՀ-ի 21 աշխատակիցների՝ դասախոսների, ուսումնաօժանդակ և ղեկավար կազմի կողմից: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները և ներքին շահակիցները՝ուսանողները, չեն մասնակցել: Յուրաքանչյուր չափանիշ վերլուծվել է 2 աշխատակցի կողմից՝ հաշվի առնելով աշխատակցի աշխատանքային ուղղվածությունը և չափանիշի պահանջները:

Ինքնավերլուծական զեկույցը հիմնականում եղել է նկարագրական և ընդհանրական, որը երբեմն հնարավորություն չի տվել փորձագետներին նախնական գնահատման ժամանակ հասկանալ և ճիշտ գնահատել քոլեջում տիրող իրական վիճակը:

Նախապատրաստական փուլ

ՄՈՒՀ-ի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել էր քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈՒ ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,
4. նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և ինստիտուցիոնալ և ծրագրային բաժնի ղեկավարը կազմել է փորձագիտական առցանց այցի պլան-ժամանակացույց: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, զուգահեռ հանդիպումներ և այլն: ՈԱԱԿ-ը քոլեջի փորձագիտական առցանց այցերի ընթացքում որպես նորույթ ավելացրել է երկու զուգահեռ հանդիպումներ, զուգահեռ հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբը բաժանվում է՝ յուրաքանչյուր փորձագետ ըստ իր մասնագիտական ուղղվածության: Յուրաքանչյուր փորձագետ (բացի ուսանող փորձագետից, նա միացել է մյուս փորձագետներից մեկին) հնարավորություն է ունեցել առանձին երկու մասնագիտական

հանդիպումներ ունենալ քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրում դասավանդող դասախոսների, կրթական ծրագրի պատասխանատուի և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված մոդուլում սահմանված արդյունքի ձեռքբերմանը:

Քանի որ փորձագիտական այցերը եղել են առցանց և փորձագիտական խումբը չէր կարող այցեր կատարել հաստատության ստորաբաժանումներ, այդ իսկ պատճառով ժամանկացույցում ներառված են եղել նաև հանդիպումներ, որի մասնակիցներին կարող էր ընտրել փորձագիտական խումբը, այս հանդիպումները թույլ են տվել փորձագետներին լրացնել այն տեղեկատվությունը, որը, ըստ փորձագետների, թերի կամ ոչ միանշանակ է եղել:

Նախանական այց

Պայմնավորված COVID 19 համավարակով՝ քոլեջի նախնական այցը կատարվել է առցանց միջավայրում երկու շաբաթ առաջ փորձագիտական առցանց այցից, հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ համակարգողները, ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը: Հանդիպման ընթացքում քոլեջին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական առցանց այցերի պլան-ժամանակցույցը, ներկայացվել է լրացուցիչ ուսումնասիրության փաստաթղթերի ցանկը և համավարակի պայմաններում առցանց փորձագիտական այցերի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները (քոլեջի կողմից տեսանյութերի տրամադրում, որտեղ կերևա քոլեջի հիմնական ռեսուրսային բազան՝ լսարաններ, լաբորատորիաներ, գրադարաներ և այլն, քոլեջի կողմից փորձագետների կողմից պահանջված ուսումնասիրվող փաստաթղթերի առցանց տարբերակի ապահովում պատշաճ ժամկետներում, առցանց միջավայրում փարձագիտական այցերի տեխնիկական կանոնների ապահովում՝ տեսախցիկների միացված լինելը, մեկ ընդհանուր տեսախցիկի պարագայում ողջ սենյակը տեսնելու հնարավորությունը, սենյակում բացի թիրախային խնմբերից այլ անձանց առկայության բացառումը և այլն):

Փորձագիտական առցանց այց

Փորձագիտական այցը նախապես պլանավորված էր իրականացնել եռօրյա, սակայն առցանցի պարագայում եռօրյա փորձագիտական այցը դարձավ քառօրյա՝ պահպանելով փորձագետների նույն աշխատածավալը:

Փորձագիտական առցանց այցը տեղի է ունեցել 2020թ. նոյեմբերի 24-27-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցով նախատեսված այցից երկու օր առաջ (22.11.2020թ.) փորձագիտական խմբի բոլոր անդամները, համակարգողը, ՈԱԱԿ ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը ունեցել են փակ հանդիպում առցանց միջավայրում: Հանդիպման նպատակն էր դուրս բերել քոլեջի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափորոշիչների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել առցանց միջավայրում իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական առցանց այցը սկսվել և ավարտվել է քոլեջի տնօրենի հետ հանդիպումներով:

Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ մասնակիցներն ընտրվել են պատահականության սկզբունքով նախօրոք տրամադրված ցանկից (գործատուների և

ամբիոնների վարիչների սակավ լինելու հանգամանքով պայմանավորված ներառվել են բոլորը): Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, ըստ նախատեսվածի, փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել առցանց միջավայրում:

Տարբեր հանդիպումների ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և քննարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ինչպես ամեն հանդիպման ավարտին, այնպես էլ ամեն օրվա վերջում այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ քննարկման և գնահատման ժամանակ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է քոլեջի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, քոլեջի կողմից ներկայացրած ռեսուրսների նկարահանման և փորձագիտական առցանց այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ դեկտեմբերի 24-ին:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ԿՏՊՔ-ն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 13.01.2021թ.-ին: ՈԱԱԿ-ը քոլեջի դիտարկումները տրամադրել է փորձագիտական խմբին: 25.01.2021թ.-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է քոլեջի և փորձագիտական խմբի առցանց հանդիպում, որի ժամանակ քննարկվել է քոլեջի դիտարկումները:

Հաշվի առնելով քոլեջի դիտարկումները՝ փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 03.02.2021թ.-ին:

Անահիտ Տերտերյան
Համակարգողի ստորագրությունը

3 փետրվարի 2021թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Պատմություն**. Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը իմնադրվել է 1966 թվականին և կոչվել Հրազդանի ինդուստրիալ-տեխնոլոգիական տեխնիկում: 2000 թվականին տեխնիկումը վերանվանվել է Հրազդանի պետական քոլեջ, իսկ 2011 թվականի ապրիլի 21-ի թիվ 346-Ա/Ք հրամանի համաձայն՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ ՊՈԱԿ: Քոլեջն ունի 54 -ամյա պատմություն:

Այսօր ԿՏՊՔ-ում սովորում է շուրջ 570 ուսանող միջին մասնագիտական և նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագրերով: ԿՏՊՔ-ն իրականացնում է 10 կրթական ծրագիր: Քոլեջը, կախված մասնագիտությունից, իրականացնում է ընդունելություն 9-ամյա և 12-ամյա կրթության հիմքով: Ընդունված ուսանողների մոտ 90%-ը սովորում են անվճար հիմունքներով:

Ուսուցումը քոլեջում իրականացվում է մոդուլային համակարգով և ինտերակտիվ մեթոդներով:

Քոլեջում դասավանդում են բարձրակարգ մասնագետներ, իսկ ԿՏՊՔ-ի 6 դասախոսներ մասնագիտական ուսումնական ձեռնարկների և գիտական հոդվածների հեղինակներ են:

2. **Կրթություն.** ԿՏՊՔ-ն պատրաստում է միջին մասնագիտական հետևյալ որակավորմամբ մասնագետներ՝ հաշվապահներ, տեխնիկ ծրագրավորողներ, դիզայներներ, տեխնիկ-ագրոնոմներ, ատամնատեխնիկներ, դեղագետներ, մենեջերներ զբոսաշրջության ծառայությունների սպասարկման, բուժքույր/բուժեղբայրներ և այլն: Այս մասնագիտությունների դասավանդման համար քոլեջում առկա է համապատասխան դասախոսական կազմ:

Քոլեջն իր Ռազմավարական ծրագրում իր առաքելության մեջ կարևորում է որակյալ մասնագետների պատրաստումը՝ տնտեսության ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, և կրթական ծառայությունների ճկունությունը աշխատաշուկայի փոփոխությունների նկատմամբ:

3. **Հետազոտություն/ստեղծագործ մտածելակերպ.** ԿՏՊՔ-ն Հիմք ընդունելով քոլեջի կանոնադրությունը և ռազմավարական նպատակները՝ մշակում և իրականցում է ստեղծագործական, հետազոտական, փորձարարական աշխատանքներ՝ /կուրսային աշխատանքներ, ռեֆերատներ, անհատական ինքնուրույն աշխատանքներ, դիպլոմային աշխատանքներ, նախագծային աշխատանքներ, ստենդներ, պաստառներ, մակետներ և այլն/ ոլորտային մասնագիտությունների շրջանակներում: Հետազոտական ծրագրերի համակողմանի զարգացումը ԿՏՊՔ-ն դիտարկում է որպես իր ռազմավարական առաքելության և նպատակների իրականացման հիմք:

Հետազոտական աշխատանքների իրագործմանը հատկապես նպաստում են տարբեր ոլորտային մասնագիտությունների շրջանակներում անցկացվող պրակտիկաները, դրանք նպատակ են հետապնդում նպաստել ուսանողների կողմից մասնագիտական գործունեության վերլուծության հմտությունների ձևավորմանը, ինչպես նաև մասնագիտական խնդիրների լուծման ճանապարհին ցուցաբերել ստեղծագործական մոտեցումներ, զարգացնել տեսական և գործնական գործունեության մոդելավորման և իրականացման ունակությունները, ձևավորել ինքնակրթության և ինքնակատարելագործման կարողություններ:

4. **Արտաքին կապեր.** Տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժի զարգացումը ԿՏՊՔ-ի ռազմավարական առաքելության կարևոր ուղղություններից է: ՄՈՒՀ-ի նպատակներից է Մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում

նորարարությունների, ինչպես նաև տեղայնացված առաջնային առաջավոր միջազգային փորձի ներդրումը, զարգացումն ու տարածումը: ՄՈՒՀ-ը համագործակցում է տարածաշրջանի ուսումնական հաստատությունների և գործատուների հետ, ԿՏՊՔ-ն նպատակ ունի համագործակցության այդ շրջանակներն ընդլայնելու:

5. **Որակի ապահովում.** ԿՏՊՔ-ում որակի ապահովման համակարգը ներդրման փուլում է, քոլեջն ունի որակի ապահովման պատասխանատու: Քոլեջում ձևավորվել է որակի ապահովման համակարգի կայացման փաստաթղթային հենք, սակայն դեռևս քոլեջում ուսանողների շրջանում միայն իրականացվում են հարցումներ: ԿՏՊՔ-ի ուրակի ապահովման համակարգի խնդիրներից է՝ ապահովել որակի մշակույթի ստեղծման և շարունակական բարելավման նախադրյալներ:

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

ԿՏՊՔ-ի կանոնադրությամբ (հաստատված 2012 թ.-ին) սահմանվում են հաստատության գործունեության հիմնական ուղղություններն ու նպատակները: ԿՏՊՔ-ի 2015-2020 թթ. ռազմավարությամբ սահմանվում են քոլեջի տեսլականը, առաքելությունը, նպատակներն ու խնդիրները: Այս փաստաթղթերում սահմանված է, որ ԿՏՊՔ-ն գործունեություն է ծավալում ՈԱՇ-ի 5-րդ մակարդակում:

Շահակիցների պատկերացումները բազմաբևեռ են ԿՏՊՔ-ի առաքելության բնութագրման առումով: Ըստ ԿՏՊՔ-ի ղեկավարության ԿՏՊՔ-ի շրջանավարտները համալրում է տարածաշրջանի ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան աշխատաշուկան: Այլ ներքին շահակիցներ նշում են, որ ԿՏՊՔ-ն ավարտողները լիովին պատրաստ են զբաղեցնել աշխատաշուկան, ընդ որում բավական լայն սպեկտոր է ընդգրկում այդ պատկերացումները՝ կազմակերպիչ, ռազմավարական պլանավորողից մինչև նեղ ուղղությամբ կատարող և սպասարկող, նաև առկա է մոտեցում, որ ԿՏՊՔ-ն միայն ճանապարհ է դեպի բուհ: Գործատուների մոտ գերակշռում է այն մոտեցումը, որ ԿՏՊՔ-ի շրջանավարտները զբաղեցնում են միայն սպասարկման ոլորտը կամ զբաղեցնում են աշխատաշուկայի նեղ ուղղությամբ կատարողի դեր, միաժամանակ, գլխավորապես, անհրաժեշտություն են տեսնում ուսումը շարունակելու կամ վերապատրաստվելու: Նշենք նաև, որ ըստ ինքնավերլուծության մեջ առկա տվյալների՝ աշխատանք ունեցող շրջանավարտների գերակշռող մասը աշխատում է ոչ իր մասնագիտությամբ: Նշենք, որ ղեկավար կազմը և դասախոսական կազմը կարևորեցին ներդրված նոր մասնագիտությունների իրականացումը՝ նշելով, որ դրանք բխում են աշխատաշուկայի պահանջներից: Նրանց կողմից կարևորվեց նաև մյուս կրթական ծրագրերի իրականացումը, որոնք ոչ պակաս կարևորեցին տարածաշրջանի համար:

Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ քոլեջի ղեկավար կազմը համագործակցում է տարածաշրջանի գործատուների տարբեր ներկայացուցիչների հետ, և ՄԿԾ-ների ներդրման ժամանակ հաշվի են առնվում տարածաշրջանում նրանց կողմից առաջիկա զարգացման միտումները, սակայն աշխատաշուկայի լիարժեք ուսումնասիրման մեխանիզմներ առկա չեն: Որոշ գործատուների կողմից կարևորվեց բանվորական աշխատուժը, նրանց կողմից ակնկալիք կար, որ ԿՏՊՔ-ն պետք է լրացնի այդ բացը, իսկ իրենց կողմից առկա էր պատրաստակամություն ֆինանսական աջակցություն ցուցաբերել իրենց ապագա աշխատակիցներին՝ ուսումնառության ընթացքում:

Ուսանողների մասնակցությունը ՌԾ-ի մշակմանը արտահայտվում է միայն Կառավարման խորհրդում նրանց ներկայացուցիչների առկայությամբ: Ռազմավարական ծրագիրը հաստատվում է Կառավարման խորհրդի կողմից: Կառավարման խորհրդում ընդգրկված են նաև դասախոսներ, գործատուներ, սոցիալական գործընկերներ: Շրջանավարտները զերծ են այս գործընթացներին մասնակցությունից:

ԿՏՊՔ-ի 2015-2020 թթ. ռազմավարությունը պարունակում է քոլեջի առաքելությունը, նպատակները և խնդիրները որոնք ընդհանրական են, քոլեջի նպատակն է՝ կրթական

առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրմամբ՝ ավանդական, ինչպես նաև նպատակային փորձարարական և էլեկտրոնային ուսուցման կարճաժամկետ ծրագրերի իրականացման ու տարբեր կազմակերպությունների, այդ թվում ուսումնական հաստատությունների ընդգրկմամբ ստեղծված ցանցային համակարգի ձևավորման շնորհիվ դառնալ Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական համակարգի զարգացման գերազանցության և տարածաշրջանային բազմագործառութային կենտրոն՝ ստանձնելով կրթական բարեփոխումներն առաջնորդողի, տարածողի դերը՝ ապահովելով որակյալ մասնագետների պատրաստումը՝ աշխատաշուկայի պահանջներին և անձի պահանջմունքներին համապատասխան:

Ռազմավարությունը չունի պլան-ժամանակացույց, առկա չեն կոնկրետ քայլերի հաջորդականություն, որը կհանգեցներ նախանշված խնդրի իրականացմանը, չկան խնդրի իրականացման համար կոնկրետ պատասխանատուներ, ժամանակահատված և ցուցիչներ:

Տարվա սկզբին Կառավարման խորհուրդը, ֆինանսական հոսքերը հաշվի առնելով, կազմում է բյուջեի նախագիծը: Քոլեջի տնօրենը հաշվետվություն է ներկայացնում կառավարման խորհրդին, բացի այդ, ըստ մի շարք ձևաչափերի տեղեկատվություն է տրամադրվում ՄԿՈՒԶԱԿ-ին: Որակի ապահովման կենտրոնը և Կարիերայի կենտրոնը ունեն աշխատանքային պլաններ և ներկայացնում են հաշվետվություններ: Հստակ չի արտահայտվում ռազմավարական ծրագրով պայմանավորված հիերարխիկ պլանավորումը: Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ Կարիերայի կենտրոնի հաշվետվությունն արտահայտվում է ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից ներկայացված ձևաթղթերով պահանջվող տվյալների ներկայացմամբ: Ամբիոնները ունեն աշխատանքային պլաններ, որոնց ձևաչափերում առկա է նշում տվյալ պլանավորման կատարման վերաբերյալ: Պետք է նշել, որ ՄՈՒՀ-ում առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման այլ մեխանիզմներ չկան:

Դատողություններ: ԿՏՊՔ-ի տեսլականը, առաքելությունն ու նպատակները ամրագրված են ռազմավարական ծրագրում, նպատակներն ու գործունեության հիմնական ուղղությունները՝ նաև կանոնադրությունում: Սակայն շահակիցների պատկերացումների փունջը ոչ միայն չի համընկնում լիովին, այլև առկա են նույնիսկ դրանց տարընկալման դեպքեր: Տարբեր են ուսանողների, գործատուների և աշխատակիցների ակնկալիքները, ինչը դրսևորվում է նաև աշխատաշուկայում տեղի և դերի անհստակությամբ, ինչի արդյունքում աշխատաշուկայում տեղ զբաղեցրած ուսանողներն իրենց մասնագիտությամբ չեն աշխատի, ինչը փաստում են նաև Կարիերայի կենտրոնի տվյալները: Միաժամանակ փաստաթղթով ամրագրված առաքելության որոշ դրույթներ լիարժեք կերպով չեն արտահայտվում շահակիցների պատկերացումներում և քոլեջի գործունեության մեջ. օրինակ՝ ըստ քոլեջի առաքելության այն զարգացնում է տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժը կամ ստեղծում է օպտիմալ պայմաններ արդյունավետ և որակյալ ուսուցման համար՝ ցանկացած տեղում և ցանկացած ժամանակ (էլեկտրոնային ուսուցում):

ՌԾ-ի մշակման գործընթացում ներգրավված չեն ներքին և արտաքին շահակիցների լայն շրջանակ:

Կարևոր է, որ քոլեջի ղեկավար կազմը տարածաշրջանի գործատուների տարբեր ներկայացուցիչների հետ կապեր է հաստատում, կարևորում նրանց պահանջները, նաև՝ առանձին դեպքերում արդյունավետ կերպով կիրառում ռեսուրսները ուսանողների պրակտիկ

հմտությունների զարգացման համար, սակայն ոչ բոլոր ՄԿԾ-ների ուղղությամբ է այդ համագործակցությունը դրսևորվում և առկա չեն համագործակցության ձևավորման ինստիտուցիոնալ մոտեցումներ, առկա չեն աշխատաշուկայի ուսումնասիրման հստակ մոտեցումներ և մեխանիզմներ, ինչի արդյունքում տարածաշրջանում առկա են մի շարք մասնագետների պահանջ, որը գործատուներն ակնկալում են քոլեջից, միաժամանակ բավական շրջանավարտներ կամ մնում են առանց աշխատանքի, կամ շարունակում են ուսումը բուհերում իրենց տեղը որոշակիացնելու համար և/կամ աշխատում են ոչ իրենց մասնագիտությամբ:

Ներքին և արտաքին շահակիցները վերոնշյալ ձևերով ներգրավված են ՌԾ-ի մշակման գործընթացներում, սակայն այդ նեգրավվածությունը շատ թույլ է արտահայտված, հետևաբար առաքելությունն ու նպատակները լիարժեք չեն արտահայտում շահակիցների կարիքները, ինչը վկայում են նրանց պատկերացումների և ակնկալիքների ակնհայտ տարբերությունները:

2015-2020 թթ.-ի ռազմավարական ծրագիրը քոլեջի առաջին ռազմավարական ծրագիրն է, որում արտահայտված նպատակները և խնդիրները բավական ընդհանրական են, ինչպես նաև առկա չէ պլան-ժամանակացույց, կոնկրետ քայլեր, քայլերի պատասխանատուներ և ցուցիչներ, ինչը նշանակում է, որ քոլեջում դեռևս առկա չեն նպատակների իրականացման մշտադիտարկման և վեանայման հստակ մեխանիզմներ: Սակայն քոլեջում ստորաբաժանումները հիմնականում ունեն աշխատանքային պլաններ, որոնք կազմվում են ստորաբաժանումների անմիջական գործառույթներով պայմանավորված: Ամբիոնները նաև անդրադառնում են դրանց կատարած լինելուն, որը քոլեջում գործող հաշվետվության մոտեցումն է: Քոլեջի տնօրենը հաշվետվություն է ներկայացնում Կառավարման խորհրդին, որի ժամանակ Կառավարման խորհուրդը հնարավորություն ունի անդրադառնալու ռազմավարական նպատակների իրագործման վերահսկմանը: Այսպիսով՝ ռազմավարական պլանավորում և կառավարում քոլեջում չի իրականացվում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԿՏՊՔ-ն տարածաշրջանում հատուկ տեղ է զբաղեցնում, գործող ռազմավարական ծրագիրը քոլեջի գործունեության ռազմավարական պլանավորման առաջին փորձն է, ներքին և արտաքին շահակիցների կողմից նպատակների և խնդիրների իրագործման վրա ազդելու հնարավությունը, ինչպես նաև դրանց իրագործումը հաշվետվողականության որոշ մոտեցումների առկայությամբ գնահատման որոշ հնարավորությունները, փորձագիտական խումբը գտնում է, որ ԿՏՊՔ-ն բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԿՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

ԿՏՊՔ-ի կառավարման մարմիններն են հիմնադիրը, լիազոր մարմինը, կոլեգիալ կառավարման մարմինը՝ կառավարման խորհուրդը և գործադիր մարմինը՝ տնօրենը: Ըստ ԿՏՊՔ-ի կանոնադրության սահմանվում են լիազորությունների շրջանակները: Քոլեջի տնօրենը հաշվետվություն է ներկայացնում կառավարման խորհրդին: ԿՏՊՔ-ի տնօրենը սահմանում է քոլեջի կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը, միաժամանակ կառավարման խորհուրդն է հաստատում ստորաբաժանումների կանոնակարգերը: ԿՏՊՔ-ն ունի սահմանված կառուցվածք: Տնօրենն ունի 3 տեղակալ՝ կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով, ուսումնական աշխատանքների գծով, ուսումնաարտադրական աշխատանքների գծով, ովքեր համակարգում և վերահսկում են համապատասխան ոլորտների աշխատանքները: Առկա է Կադրերի բաժին, Կարիերայի կենտրոն, Որակի ապահովման կենտրոն (մանրամասն՝ 10-րդ չափանիշ)[3], Պակտիկայի բաժին, որտեղ աշխատում են մեկական աշխատակից, նրանց գործունեության կանոնակարգման համար առկա են համապատասխան կանոնակարգեր, որոնք հաստատվել են 2018 թ.-ին, առկա են նաև աշխատանքային պլաններ: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ գործատուների հետ համագործակցությունը պրակտիկաների կազմակերպման առումով կարգավորվում է ինչպես Պրակտիկայի բաժնի, այնպես էլ՝ Կարիերայի կենտրոնի կողմից: Քոլեջն ունի նաև Բժշկական մասնագիտությունների գծով բաժին, Հանրակրթական ծրագրերի բաժին, Հաշվապահություն, Գրադարան, Արխիվ, Բուժկետ:

Կարիերայի պատասխանատուն զբաղվում է նաև քոլեջի կայքում և ֆեյսբուքյան էջում տեղեկատվության համալրմամբ, ինչպես նաև ընդունելության գործընթացներով: Հանրակրթության բաժինը ստեղծվել է այս տարի, այն ունի 2 ամբիոն՝ հումանիտար առարկաների և բնագիտամաթեմատիկական առարկաների ամբիոններ: Բաժինն ունի աշխատանքային պլան, սակայն բաժնի գործառույթները դեռ հստակեցվում են: Միաժամանակ փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ դեռևս գլավորապես իրականացվում են ամբիոնի գործառույթներ: Ներդրվել են նոր կառուցվածքային միավորներ, որոնց անհրաժեշտությունն ու դերը դեռևս լիովին գիտակցված չէ:

Քոլեջում գործում են տնօրինական, մանկավարժական և ուսումնամեթոդական խորհուրդները, որոնց գործառույթների շրջանակները ներկայացվում են կանոնակարգերի համաձայն: Ամբիոնը միջին մասնագիտական հաստատության հիմնական ուսումնամեթոդամանկավարժական ստորաբաժանումն է, քոլեջն ունի 9 ամբիոն, որոնք առաջնորդվում են համապատասխան կանոնակարգերով, քոլեջում առկա են նաև ուսումնական կաբինետներ:

2018 թ.-ին Կառավարման խորհրդի որոշմամբ հաստատվել ե «ԿՏՊՔ-ի ներքին կարգապահական կանոններ» փաստաթուղթը, որը սահմանում է աշխատակիցների

[3] Ավելացվել է քոլեջի դիտարկումների արդյունքում

իրավունքները, պարտականությունները, խրախուսման տարբերակները և խախտումների համար պատասխանատվությունները: Առկա են աշխատակիցների պաշտոնների նկարագրեր:

Ստորաբաժանումների աշխատանքների արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ չկան, տնօրենը ըստ արդյունքի ինտուիտիվ կերպով հասկանում է, թե արդյոք կադրերը բավական են ու արդյոք պատշաճ կատարել են իրենց աշխատանքը:

Կառավարման խորհրդում ընդգրկված են ներկայացուցիչներ հիմնադրի և լիազոր մարմնի կողմից, դասախոսական կազմից, ուսանողական կազմից, տարածքային զբաղվածության ծառայությունից, ինչպես նաև սոցիալական գործընկերներ: Կառավարման խորհուրդը լավատեղյակ չէ ռազմավարական ծրագրի վերաբերյալ, չնայած որ վերջինս հաստատվել է իրենց կողմից: Փորձագիտական առցանց այցը ցույց տվեց, որ կառավաման խորհուրդը կոնկրետ չափանիշներ կամ մոտեցումներ չունի հաշվետվությունները գնահատելու համար: Քոլեջում գործում է ուսանողական խորհուրդը, որը նաև մեխանիզմ է ուսանողների կողմից խնդիրներ վեր հանելու համար: Դասախոսական կազմը ընդգրկված է նաև քոլեջի կառավարման մի շարք մարմիններում, մասնավորապես՝ մանկավարժական խորհրդում, տնօրինական խորհրդում, ուսումնամեթոդական խորհրդում: Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ ուսանողների և դասախոսների ներգրավվածությունը ՄԿԾ-ներին վերաբերող հարցերի քննարկմանը խիստ թույլ է արտահայտված, իսկ նախաձեռնողականություն չի դրսևորվում նրանց կողմից:

Կառավարման հիերարխիան գործում է վերևից ներքև՝ տնօրեն, փոխտնօրեն, ամբիոններ, դասախոսներ:

Քոլեջն ունի ռազմավարական ծրագիր, ծրագրում սահմանվում են առաքելությունը, նպատակները և խնդիրները ընդհանրական կերպով: Բացակայում է ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույց, պատասխանատուներ և ցուցիչներ: Ստորաբաժանումների աշխատանքային պլանները կազմված են ըստ համապատասխան կանոնակարգերից բխող հիմնական գործառույթների: Ամբիոնների աշխատանքային պլանների հաշվետվողականաությունն արտահայտվում է կատարված լինելու վերաբերյալ նշումով: Վարչական ստորաբաժանումների հաշվետվություններն արտահայտվում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից ըստ որոշ ձևաչափերի տվյալների տրամադրմամբ: ՌԾ-ն 2020 թ.-ին մոտենում է ավարտին, ըստ ՌԾ-ի քոլեջի հիմնական ուղղություններից են նաև՝ տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժի զարգացում, արդյունավետ և որակյալ ուսուցման համար օպտիմալ պայմանների ստեղծում՝ ցանկացած տեղում և ցանկացած ժամանակ (էլեկտրոնային ուսուցում), գիտահետազոտական աշխատանքների, հրատարակչական աշխատանքների և այլնի իրականացում: Սակայն պետք է նշել, որ օրինակ միջազգային համագործակցության արդյունքներ նկատելի չեն, միաժամանակ համավարակի պայմաններում հեռավար կերպով ուսուցման կազմակերպման հետ կապված առաջացել են մի շարք խնդիրներ /մանրամասն՝ 3-րդ չափանիշում/ և այլն:

Ֆինանսական միջոցների բաշխումն իրականցվում է յուրաքանչյուր տարվա սկզբին, Կառավարման խորհուրդը, ֆինանսական հոսքերը հաշվի առնելով կատարում է բաշխում՝ առաջնային դիտելով աշխատակիցների աշխատավարձը, կոմունալ ծախսերը, ապա նաև շենքի բարենորոգման աշխատանքները, գույքի ձեռքբերումը, լաբորատոր պայմանների ստեղծումը: Փորձագիտական առցանց այցի ժամանակ նշվեց, որ ըստ հնարավորության նաև պարգևատրում է տրամադրվում բոլոր աշխատակիցներին իրենց աշխատավարձի չափով:

Ըստ անհրաժեշտության որոշ գումար է հատկացվում նաև մշակութային միջոցառումների իրականացման համար: Որոշ չափով լրացուցիչ ֆինանսական հոսքեր (շուրջ 2%) ապահովվում է կարճաժամկետ ծրագրերի իրականացման և վարձակալմամբ տարածք տրամադրելու արդյունքում:

Կառավարման գործընթացում ռիսկերի կառավարման մեխանիզմներ չեն գործածվում: Քոլեջում չի իրականացվում ԿՏՊՔ-ի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն: Որոշ տեղեկատվություն ստանում են անձնական կապերի վրա հիմնված՝ գործատուների հետ համագործակցության արդյունքում, ինչպես նաև որոշ շրջանավարտների մասին տվյալներից: Գլխավորապես գործում է միանձնյա կառավարում: Հարցումները նոր են քոլեջում և դեռևս ձևավորված չէ այն մշակույթը, որ դրանց միջոցով ձեռք բերված տվյալները նկատի առնվեն որոշումներ կայացնելիս:

Քոլեջում ներդրվել են մի շարք ստորաբաժանումների գործունեության կանոնակարգեր և այլ փաստաթղթեր, սակայն փաստաթղթերի բարելավման հստակ մոտեցումներ և օրինակներ առկա չեն:

ԿՏՊՔ-ում իրականացվում են դասընթացի գնահատմանն ուղղված հարցումներ, իրականացվում են դասալսումներ, առկա են կրթական ծրագրերի քննարկումների դեպքեր: Հարցումների արդյունքներն ամփոփվում են համընդհանուր միջին միավորներով յուրաքանչյուր դասախոսի համար: Այս մոտեցումների արդյունավետության գնահատման մեխանիզմներ դեռ չեն կիրառվում:

Արտաքին և ներքին շահակիցներին տեղեկատվության հասանելիությունն ապահովվում է բուկլետների, ցուցապաստառների, կայքի, ֆեյսբուքյան էջի միջոցով: Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ ուսանողները լավատեղյակ չեն այդ միջոցներից, գլխավորապես իրազեկվում են դասախոսներից և կուրսղեկներից: Առկա չեն տեղեկատվության հասանելիությունն ապահովող միջոցները գնահատող մեխանիզմներ:

Դատողություններ: ԿՏՊՔ-ի կառավարման մարմինների և գրեթե բոլոր վարչական ստորաբաժանումների գործառույթների շրջանակը սահմանված է համապատասխան փաստաթղթերով: Սակայն, դրա հետ մեկտեղ, առկա են ստորաբաժանումներ, որոնց գործունեությունը որոշակիացման անհրաժեշտություն ունի, քանի որ հստակեցված չեն գործառույթների շրջանակը կամ երբեմն այդ շրջանակները հատվում կամ կրկնվում են տարբեր օղակների դեպքում, սա կարող է վտանգել ստորաբաժանման արդյունավետ գործունեությունը, հատկապես, երբ նկատելի է գործառույթների խտացում մեկ պատասխանատուի պարագայում:

Դրական է այն, որ առկա է «ԿՏՊՔ-ի ներքին կարգապահական կանոններ» փաստաթուղթը և աշխատակիցների պաշտոնների նկարագրեր, սա հստակեցնում է գործատու-աշխատակից հարաբերությունները և նվազեցնում այս առումով ռիսկերն ու կամայականությունները:

ԿՏՊՔ-ի կառավարման խորհուրդը հիմնականում հաստատում է տնօրենի առաջարկությունները, ինչը վնասում է կոլեգիալ կառավարման մոտեցումներին: ԿՏՊՔ-ում առկա են մեխանիզմներ, որոնք հնարավորություն են ընձեռում դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց վերաբերող որոշումների կայացմանը, սակայն այդ հնարավորությունները լիարժեք չեն օգտագործվում նրանց կողմից, հատկապես խիստ թույլ է արտահայտված կրթական ծրագրերին և ուսումնական գործընթացին վերաբերող հարցերին

ուսանողների ներգրավվածությունը: Առկա չեն շահակիցների կարիքների գնահատման հստակ մեխանիզմներ:

Քոլեջն ունի ռազմավարական ծրագիր, որում առկա են նպատակներ և խնդիրներ, սակայն վերջինս չի վերածվել ռազմավարական երկարաժամկետ պլանի: Ստորաբաժանումների աշխատանքային պլաններն էլ բխում են կանոնակարգերի հիմնական գործառույթներից և չեն կապակցվում ռազմավարական ծրագրի հետ, ուստի և չեն երաշխավորում ռազմավարական ծրագրի իրականացումը[4]: Ռազմավարական ծրագրի իրագործման մշտադիտարկման մեխանիզմների բացակայության մասին են վկայում ինչպես ռազմավարական ծրագրում կոնկրետ ցուցիչների, ժամկետների, պատասխանատուների բացակայությունը, այնպես էլ տարբեր ստորաբաժանումների աշխատանքային պլանների վրա հիմնված վերլուծական հաշվետվությունների բացակայությունը և կառավարման խորհրդի կողմից հաշվետվությունների գնահատման մոտեցումների բացակայությունը: Չնայած որ ռազմավարական հստակ պլանի բացակայությունը թույլ չի տալիս ֆինանսական պլանավորումը բխեցնել ռազմավարական ծրագրից, սակայն ֆինասների բաշխումն իրականացնելիս գլխավորապես առաջնորդվում են առաջնահերթություններով, միայն թե այստեղ առկա է այն խնդիրը, որ ֆինանսական ռեսուրսների սահմանափակությամբ պայմանավորված կան ռազմավարական նպատակներ, որոնց ֆինանսական միջոցներ հատկացնելու հնարավորություն չի լինում, սա ևս փաստում է այն հանգամանքը, որ ռեսուրսների արդյունավետ կառավարման մեխանիզմներ առկա չեն և չեն առաջնորդվում որակի կառավարման սկզբունքով:

Բացակայում են կառավարման արդյունավետության գնահատման մեխանիզմները, ուստի աշխատանքների արդյունավետությունը գնահատվում է ինտուիտիվ կերպով, առկա չէ ինստիտուցիոնալ մոտեցում, իսկ սա կարող է հանգեցնել մարդկային ռեսուրսների ոչ արդյունավետ տեղաբաշխման:

Որոշումներ կայացնելիս հիմնականում առաջնորդվում են անձնական կապերի հենքով տարածաշրջանի գործատուներից ստացած տեղեկատվության վրա, քոլեջը չի ուսումնասիրում իր գործունեության վրա ազդող գործոնները և ռիսկերը, ինչը հանգեցնում է կառավարման տարբեր օղակների որոշումների կայացման հարցում ինտուիտիվ մոտեցումների կիրառման:

Քաղաքականությունների և ընթացակարգերի արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ առկա չեն: Մի շարք նոր ներդրված փաստաթղթեր էլ, որոնք ստորաբաժանումների կանոնակարգեր են, պայմանավորված են օրենսդրական անհրաժեշտությամբ:

ԿՏՊՔ-ում ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ որոշ տեղեկատվություն հավաքագրվում է հարցումների, դասալսումների և քննարկումների միջոցով, որոնք սակայն խորը վերլուծության չեն ենթարկվում, որ հետո նպատակային կիրառվեն, իսկ այդ գործընթացները գնահատող մեխանիզմներ դեռևս առկա չեն:

Դրական է այն, որ ԿՏՊՔ-ն կարևորում է հրապարակվող տեղեկատվությունները, տարբեր միջոցներ է կիրառում տեղեկատվությունը հասանելի դարձնելու համար, սակայն այդ միջոցները գնահատող մեխանիզմներ առկա չեն, քոլեջը որպես ցուցիչ ընդունում է

[4] Փոփոխվել է քոլեջի դիտարկումների արդյունքում

դիմորդների կայուն քանակը, սակայն փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ ուսանողները լավատեղյակ չեն կայքից և սոցիալական էջից:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ առկա չեն առաքելության և նպատակների իրականացման երկարաժամկետ և կարճաժամկետ հստակ պլանավորումներ, առկա չեն դրանց իրագործման մշտադիտարկման և արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ, ինչպես նաև կառավարման արդյունավետության գնահատման մեխանիզմներ, արտաքին շահակիցների ներգրավվածությունը կառավարման գործընթացներին թույլ է արտահայտված, գործընթացների կառավարումն ու ընթացակարգերի վարչարարությունը իրականացնելիս չեն առաջնորդվում որակի կառավարման սկզբունքով, կառավարչական որոշումները կայացնելիս չեն առաջնորդվում հավաքագրված տվյալներով, փորձագիտական խումբը գտնում է, որ ԿՏՊՔ-ն չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԿՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

ԿՏՊՔ-ում այժմ ուսումնառությունը կազմակերպվում է 10 մասնագիտություններով: Կրթական ծրագրեր ներդնելիս ԿՏՊՔ-ն հաշվի է առնում գործատուների պահանջները, չնայած որ աշխատաշուկայի և գործատուների կարիքների համակողմանի ուսումնասիրում չի իրականացվում: Մասնավորաբար 2018 թ.-ին ներդրվել է «Ջերմատնային տնտեսություն» մասնագիտությունը, ինչը կարևոր է տարածաշրջանի համար: «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտությունը ներդնելիս հաշվի են առել նաև մարզի զարգացման ՌԾ-ն: Միաժամանակ դադարել են ուսումնառություն կազմակերպել «Թարգմանություն և սպասարկման կազմակերպում» և «Գազամատակարարման սարքերի և ստորգետնյա գազատարների շահագործում» մասնագիտություններով:

Շրաջանավարտները հիմնականում աշխատում են ոչ իրենց մասնագիտությամբ, միաժամանակ ուսանողներից շատերի համար քոլեջը շարունակական կրթության հնարավորություն է:

ԿՏՊՔ-ն ՄԿԾ-ները կազմելիս առաջնորդվում է ՊԿՉ-ներով: Միջին մասնագիտական կրթության ՊԿՉ-ները սահմանում են 1) տվյալ մասնագիտությամբ մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը, 2) հիմնական կրթական ծրագրի նկատմամբ ընդհանուր պահանջները, որտեղ նկարագրվում են նաև տվյալ կրթական ծրագրով շրջանավարտի գիտելիքների, կարողությունների և հմտությունների շրջանակը, 3) հիմնական

կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջները, 4) հիմնական կրթական ծրագրի իրականացման պայմանների նկատմամբ պահանջները, 5) մոդուլային ուսումնական ծրագրերը, որտեղ տրվում են առանցքային հմտությունների մոդուլների ժամաքանակները, նպատակները, մուտքային պահանջները, գնահատման կարգը, ուսումնառության արդյունքներն ու դրանց կատարման չափանիշները, 6) օրինակելի ուսումնական պլան, որտեղ սահմանվում է յուրաքանչյուր մոդուլի համար ուսանողի առավելագույն ծանրաբեռնվածությունը, պարտադիր լսարանային ժամաքանակը[5]:

Ըստ ՊԿՉ-ների՝ ՄԿԾ-ները կազմելիս կարող են փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները, պետք է հաշվի առնեն գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները: Ուսումնական օրինակելի պլանները պարունակում են ընտրովի և պահուստային ժամեր, որոնք քոլեջը տնօրինում է ըստ անհրաժեշտության՝ ուղղված ՊԿՉ-ով նախատեսված արդյունքների ապահովմանը: Միաժամանակ յուրաքանչյուր մոդուլի դասավանդողը մշակում է տվյալ մոդուլի բովանդակությունը, որը հաստատվում է ամբիոնում և ապա՝ մանկավարժական խորհրդում, ուսումնամեթոդական գծով փոխտնօրենի կողմից և կառավարման խորհրդում: Սակայն դասավանդողների մոտ հստակ չեն կրթական ծրագրի վերջնարդյունքների և աշխատաշուկայում շրջանավարտի զբաղեցրած տեղի վերաբերյալ պատկերացումները, նաև այդ պատկերացումները հաճախ տարբեր են գործատուների և ուսանողների մոտ եղած մոտեցումներից (Օրինակ 0413.06.5 մասնագիտության պարագայում ուսանողներին գրավում է օտար լեզվի ուսուցման հնարավորությունը, դասավանդողները շրջանավարտին տեսնում են և՛ որպես կազմակերպիչ, և՛ որպես սպասարկող, իսկ գործատուն միայն սպասարկողի դերում է տեսնում շրջանավարտին՝ միաժամանակ նշելով վերապատրաստման անհրաժեշտությունը՝ ընդ որում ուղղված այնպիսի արդյունքների ձեռքբերմանը, որոնց ձևավորմանն ուղղված մոդուլները նախատեսված են ՄԿԾ-ով): Կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում խիստ թույլ է արտաքին շահակիցների ներգրավվածությունը: Կրթական ծրագրերի բովանդակային փոփոխությունները արագ չեն արձագանքում աշխատաշուկայի արդի պահանջներին (մասնավորաբար՝ հաշվապահական ծրագրեր, ծրագրավորման լեզուներ):

ԿՏՊՔ-ում դասընթացի ծրագրերի կառուցվածքում առկա է «Մեթոդաբանություն և ռեսուրսներ» բաժինը, որտեղ ընդհանրական կերպով ներկայացվում է գործածվող դասավանդման մոտեցումը և կիրառվող ռեսուրսների անհրաժեշտությունը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները, համապատասխան հանձնարարականները ընտրում են դասախոսները՝ դրանք համապատասխանեցնելով դասընթացի արդյունքներով պայմանավորված կատարման չափանիշներին, սակայն հանձնարարականներն ուսումնասիրելիս պարզվեց, որ դրանք միշտ չէ, որ ապահովում են նախանշված գործնական կարողություններն ու հմտությունները, դրանք ոչ միշտ են համապատասխանում կատարման չափանիշներին (մասնավորաբար նման մոդուլներ առկա են «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»,

[5] Նախադասությունը դուրս է եկել՝ հաշվի առնելով քոլեջի դիտարկումը

«Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» և այլ մասնագիտական կրթական ծրագրերի տարբեր մոդուլներում):

Դասալսումների և փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ առկա է լավ փորձ, երբ դասախոսները ինքնակատարելագործմամբ մշտապես զարգացնում են իրենց հմտությունները՝ կիրառելով դասավանդման նորագույն մեթոդներ, սակայն առկա են նաև դեպքեր, երբ գործածվում են մեթոդներ, որոնք չեն երաշխավորում արդյունքների ձևավորումը: Դասավադման գործընթացում ներգրավվել են նաև գործատուներ:

ԿՏՊՔ-ում գործում է «Պրակտիկայի կազմակերպման կանոնակարգ» փաստաթուղթը, որտեղ Պրակտիկաների անցկացման համար կազմվում են ծրագրեր, և դրանց անցկացման համար ԿՏՊՔ-ն համագործակցում է տարբեր գործատուների և կազմակերպությունների հետ, ինչը միջավայր ու հնարավորություն է ստեղծում ուսանողներին պրակտիկ կարողությունների զարգացման համար, սակայն նման հնարավորություն ապահովված չէ բոլոր մասնագիտությունների ուսանողների համար: Որոշ մասնագիտություններով պրակտիկաներն անցկացվում են քոլեջում: Քոլեջում փորձում են ստեղծել անհրաժեշտ ռեսուրսային հենք դրանք հնարավորինս արդյունավետ դարձնելու համար, սակայն միշտ չէ, որ դա հնարավոր է դառնում, տարբեր մասնագիտությունների դեպքում առկա են խնդիրներ (մասնավորաբար՝ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտության դեպքում քոլեջի ռեսուրսային բազան թույլ է տալիս ուսումնասիրել ավտոմեքենայի կառուցվածքը, սակայն դա բավարար չէ ՄԿԾ-ով նախատեսված կարողությունների և հմտությունների լիարժեք ապահովման համար), բոլոր մասնագիտությունների դեպքում չեն արդարացնում: Միաժամանակ քոլեջն այս ուղղությամբ փորձում է քայլեր ձեռնարկել՝ ընդլայնելու գործատուների հետ համագործակցության շրջանակները:

Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ շահակիցներն առավել արդյունավետ են համարում գործատուների մոտ անցկացված պրակտիկաները, միաժամանակ անհրաժեշտություն կա, որ ղեկավարների կողմից առավել նպատակային ուղղորդում իրականացվի՝ ապահովելով պրակտիկաներով նախատեսված վերջնարդյունքների ձեռքբերումը: Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ առկա է նաև խնդիր, երբ պրակտիկայի վայրում պարզ է դառնում ուսանողների կողմից անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների խիստ պակաս, մասնավորաբար՝ «Հաշվապահական հաշվառում», «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտությունների դեպքում:

Կարողությունների և հմտությունների ձեռբերմանն ուղղված մեթոդները բավարար ճկուն չեն, թույլ չեն տալիս լրացնելու բացը թեկուզ հարգելի բացակայությունների պարագայում (մասնավորաբար՝ պրակտիկաների գործընթացի հետաձգումը), միաժամանակ դրանք մեծապես տուժել են համավարակով պայմանավորված իրավիճակում ուսումնառության հեռավար կազմակերպման պայմաններում, եղած հանձնարարականները թույլ չեն տալիս հեռավար ուսումնառության պայմաններում ձևավորելու կարողություններին և հմտություններին ուղղված վերջնարդյունքները:

Հարկ է նշել, որ ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցում ներկայացված ՄԿԾ–ների ուսումնառության արդյունքները չեն համապատասխանում ՄԿԾ-ի նկարագրով կամ ՊԿՉ-ով ներկայացված ուսումնառության արդյունքներին, և բոլոր այդ արդյունքների ապահովման համար նշված են դասավանդման և ուսումնառության նույն մեթոդները,

իրականացված քարտեզագրումը չի համապատասխանում դասավանդողների պատկերացումներին:

Դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման ընթացակարգի համաձայն վեր է հանվում նաև ուսանողների կողմից դասախոսների մասնագիտական պատրաստվածության մանկավարժական որակների մասին իրենց ընկալումները, սակայն ուսանողների ներգրավվածությունը ուսուցման բովանդակության ձևավորմանը պասիվ է:

Գործում է «ԿՏՊՔ-ի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման կանոնակարգ» փաստաթուղթը:

Դասընթացի կառուցվածքում նկարագրվում է նաև յուրաքանչյուր արդյունքի գնահատման միջոցը: Գնահատման գործող մոտցումները հիմնականում ապահովում են գիտելիքների ստուգում (գրավոր, բանավոր, անհատական աշխատանքներ), սակայն դրանք միշտ չէ, որ երաշխավորում են կարողությունների և հմտությունների հստակ գնահատում: Միջանկյալ գնահատումն իրականացվում է համապատասխան արդյունքների ամփոփման ժամանակ՝ կիրառելով գնահատման նախանշված մոտեցումները: Ամփոփիչ ատեստավորումները գլխավորապես իրականացվում են բանավոր քննությունների միջոցով, որոնք միտված են գիտելիքի ստուգմանը, բացառությամբ որոշ մասնագիտությունների («Դիզայն», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգեր» մասնագիտությունների), որոնք ամփոփվում են ավարտական աշխատանքներով:

Ուսումնարտադրական պրակտիկաների ծրագրերը ներառում են մոդուլների բովանդակություններն ու ժամային բաշխման տվյալներ, դրանք չեն ներառում ակնկալվող արդյունքներ և դրանց գնահատման մոտեցումներ:

Գնահատման համակարգի արդյունավետության գնահատման մեխանիզմներ առկա չեն:

ԿՏՊՔ-ն մարզի միջին և նախնական մասնագիտական 10 ուսումնական հաստատությունների հետ 2012 թ.-ին կնքել է մտադրությունների հուշագիր, որի հիմնական նպատակն է ձևավորել Կոտայքի մարզի նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանց, որի գործունեության հիմնական նպատակներն են կոտայքի մարզում ՄԿՈ-ի հեղինակության, վարկանիշի և գրավչության, դրա որակի, հաստատությունների գործունեության արդյունավետության բարձրացումը և սոցիալական գործընկերության ընդլայնումը:

Առկա չեն ՄԿԾ-ների համեմատական վերլուծություններ, առկա չեն ուսանողների և դասավանդողների շարժունության դեպքեր:

Առկա է «ԿՏՊՔ-ի առարկայական (մոդուլային) ծրագրերի վերանայման, մշակման, գնահատման և հաստատման կանոնակարգ (փոփոխություն)» փաստաթուղթը, որը փոփոխության է ենթարկվել 2020 թ.-ի օգոստոսի 18-ին: Ըստ կարգի նախատեսվում է պարբերաբար իրականացնել ծրագրերի արդյունավետության գնահատում, սակայն սահմանված չէ հստակ ընթացակարգ: Նույն կարգի համաձայն ծրագիրը մշակելիս հաշվի են առնվելու աշխատաշուկայի առանձնահատկությունները ընտրովի առարկաների և պահուստային ժամերի շրջանակում:

Առկա են դեպքեր, երբ գործատուների կարծիքների հիման վրա է իրականացվել փոփոխություն, օրինակ՝ վերանայման գործընթացներից մեկի արդյունքում հաշվի առնելով 3 գործընկեր-հյուրանոցների պահանջները, ուսումնական պլանից հանվել են մոդուլներ: Մյուս դեպքում ԿՏՊՔ-ի դասավանդողների կողմից վեր է հանվել ՄԿԾ-ի տարբեր մոդուլների

համընկնող արդյունքների հարցը, և նրանց կողմից՝ ՄԿՈՒԶԱԿ-ին ներկայացված առաջարկության հիման վրա իրականացվել է փոփոխություն: Նաև՝ երբ ՄԿԾ-ից դուրս են հանվել մոդուլներ, սակայն հետո դրանց անհրաժեշտությունն են զգացել և վերադարձրել են: «Դիզայն» մասնագիտության Պլասիկ անատոմիա մոդուլում 18 ժամի համար սահմանված է եղել 8 արդյունք, ինչը դասախոսների կողմից առարկության պատճառ է դարձել, քանի որ, ըստ իրենց, այդպիսի ժամային բաշխվածությամբ գնահատումն ու դասավանդումը չէր կարող այդքան արդյունք ապահովել և միաժամանակ գնահատվել: Ստիպված են եղել համառությամբ դիմել ՄԿՈՒԶԱԿ՝ փոխելու արդյունքների քանակը, և 4 ազամ դիմելուց հետո կարողացել են դարձնել 3 արդյունք:

Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզվեց, որ դասախոսները խնդիր են տեսնում «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտության մոդուլների դեպքում, համարելով, որ առկա է խնդիր տեսական և գործնական ժամերի բաշխվածության հետ, մասնավորաբար 2 ժամ տեսական ժամից հետո նախատեսվում է 4 ժամ գործնական աշխատանք, և դասախոսը չի պատկերացնում ինչ անել այդ պարագայում:

ԿՏՊՔ-ում իրականացվում են հարցումներ ուսանողների և դասախոսների շրջանում: Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ չեն գործում հստակ մեխանիզմներ, որոնք արտաքին շահակիցներին մասնակից կդարձնեն ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման, բովանդակային բարելավման գործընթացներին, այդ գործընթացներում ուսանողների մասնակցությունը խիստ թույլ է արտահայտված, իսկ դասավանդողները լիարժեք կերպով չեն օգտագործում իրենց տրված հնարավորությունները:

Դատողություններ: ԿՏՊՔ-ում իրականացվող կրթական ծրագրերի ցանկը տարածաշրջանում պահանջարկ վայելող մասնագիտություններով համալրումը, ինչը նաև ԿՏՊՔ-ի առաքելությունն է, շրջանավարտներին հնարավորություն է ընձեռում աշխատաշուկայում իրենց տեղը զբաղեցնելու համար: Միաժամանակ, փորձագիտական խումբը կարծում է, որ անհրաժեշտ է իրազեկման հստակ գործունեություն ծավալել՝ հստակեցնելու և նույնացնելու գործատու-դասավանդող-ուսանող պատկերացումները աշխատաշուկայում շրջանավարտների հնարավորությունների վերաբերյալ, քանի որ այս պատկերացումների տարբնկալումը խոչընդոտում է մասնագիտության ճիշտ ընտրության և այնուհետև աշխատաշուկայում իրենց տեղը գտնելու համար, դա է վկայում նաև այն հանգամանքը, որ շրջանավարտների մեծ մասը իր մասնագիտությամբ չի աշխատում:

Դրական համարելով այն, որ նոր մասնագիտությունների ներդրման հարցում առկա է դրական փորձ՝ առաջնորդվել տարածաշրջանի զարգացումներով և անձնական կապերի վրա հենված գործատուների ընդհանուր պահանջներով՝ փորձագիտական խումբը կարևորում է ինչպես աշխատաշուկայի ուսումնասիրման հստակ մեխանիզմների ներդրումը, այնպես էլ գործատուներին և շրջանավարտներին ՄԿԾ-ների բովանդակային փոփոխությունների իրականացման մասնակից դարձնելը, ինչը այժմ գլխավորապես բացակայում է:

Կրթական ծրագրերը բխում են ՊԿՉ-ներից և դրանց բովանդակային կառույցները հիմնականում համապատասխանեցված են ՊԿՉ-ներին, և բավականին մանրամասն նկարագրեր են պարունակում ըստ մոդուլների արդյունքների, դրանց կատարման չափանիշների, ըստ դրանց դասավանդման մոտեցումների և անհրաժեշտ ռեսուրսների, գնահատման միջոցների վերաբերյալ: Նման կառուցվածքը դրական նախադրյալ է ստեղծում, որ դասախոսները ուշադրություն դարձնեն այդ բաղադրիչների փոխկապակցման կարևորությանը և դասավանդման գործընթացում մոտեցումների կատարելագործմանը: Այս

միտումը դեռևս համընթաց կերպով չի իրականանում, և դեռևս հստակ չեն դրանց վերբերյալ դասախոսների պատկերացումները, այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ առկա են դեպքեր, երբ հանձնարարականները չեն ապահովում նախատեսված բոլոր արդյունքների (հատկապես՝ կարողություններ և հմտություններ ենթադրող) ձևավորումն ու դրանց գնահատումը, տարբեր դեպքերում առկա են ռեսուրսային խնդիրներ: Չնայած դրան, արդեն առկա է լավ փորձ, երբ դասախոսները փոխկապակցում են այդ բաղադրիչները հստակ արդյունքներ ապահովելու համար՝ միաժամանակ կատարելագործելով դասավանդման մեթոդները: Փորձագիտական խումբը կարծում է, որ այս լավ փորձը կարող է նաև քաղաքականության վերածվել:

ՄԿԾ-ներում չեն արտահայտվում ուսումնառության մեթոդները, իսկ դասավանդման մեթոդները ընդհանրական են, չի երևում կապակցումը Կրթական ծրագրով նախատեսված ուսումնառության արդյունքների հետ և չեն տարբերակվում ըստ գիտելիքների, կարողությունների և հմտությունների. այդ իմաստով անհասկանալի է մեթոդների ընտրության քաղաքականությունը, ինչը հստակ չի ընկալվում նաև դասավանդողների կողմից: Կարողությունների և հմտությունների ձևավորմանն ուղղված մեթոդների ոչ բավարար ճկունությունը (այդ թվում՝ ուսումնառության հեռավար կազմակերպման պայմաններում) կարող է խոչընդոտ հանդիսանալ կրթական վերջնարդյունքի լիարժեք ձևավորմանը:

Դասախոսների մասնակցությունը ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներին ապահովում է դասավանդման մեթոդների արդիականացումը: Մեթոդների արդյունավետության գնահատման առումով գործում են հարցումները և դասալսումները, սակայն ուսանողների ներգրավվածությունն ու ակտիվությունը այս գործընթացում բավարար չէ:

ԿՏՊՔ-ում առկա է հստակ քաղաքականություն և սահմանված ընթացակարգ ուսանողների գիտելիքների գնահատման և բողոքարկման գործընթացներում: Սակայն գնահատման գործընթացը այնքան էլ չի ապահովում կարողությունների և հմտությունների ստուգումը, դա է վկայում նման հանձնարարականների խիստ սակավությունը, առանձին դասընթացներում նաև՝ բացակայությունը, միաժամանակ այս խնդիրն արտահայտվում է նաև ամփոփիչ ատեստավորման ստուգման դեպքում:

Գնահատման համակարգի արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ առկա չեն:

Քոլեջում առկա են բավարար միջոցներ և մեխանիզմներ ակադեմիական ազնվությունն ապահովելու համար: Առաջավոր փորձի համեմատական վերլուծության իրականացումը և ուսանողների ու դասախոսների շարժունության հնարավորությունները խիստ նպաստավոր կարող են լինել ինչպես դասընթացների բովանդակությունների և մեթոդների ու միջոցների զարգացման, այնպես էլ դասախոսների հմտությունների կատարելագործման և ուսանողների համար նոր հնարավորությունների դաշտ ստեղծելու առումով, ուստի կարծում ենք, որ քոլեջի ղեկավարությունը կարող է այս ուղղությամբ քայլեր ձեռնարկել:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում ներդրվել է «ԿՏՊՔ-ի առարկայական (մոդուլային) ծրագրերի վերանայման, մշակման, գնահատման և հաստատման կանոնակարգ (փոփոխություն)» փաստաթուղթը, և որ առկա է դրական փորձ ԿԾ-ների բարելավման առումով, սակայն կարևոր է ամբողջ գործընթացի համակարգումն ու կանոնակարգումը՝ ներգրավելով ներքին և արտաքին շահակիցներին, ինչը կհանգեցնի նպատակային բարեփոխումների: Հարկ է, որ սա կարևորվի քոլեջի ղեկավար կազմի կողմից և քայլեր ձեռնարկվեն այս ուղղությամբ:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս կրթական ծրագրերը բխում են ՊԿՉ-ներից, հիմնականում համահունչ են առաքելությունից բխող նպատակներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների և ակնկալվող ուսումնառության արդյունքների, քոլեջում քայլեր են ձեռնարկվում ապահովելու ըստ ուսումնառության ակնկալվող արդյունքների դասավանդման և գիտելիքի գնահատման մեթոդների համապատասխան ընտրություն, ապահովում է ակադեմիական ազնվություն, կարևորում է առարկայական ծրագրերի վերանայման, մշակման, գնահատման և հաստատման գործընթացի կարևորությունը, ունի քաղաքականություն, որը թույլ կտա հետագայում ապահովել գործընթացների համակարգված ընթացք և ապահովել ներքին ու արտաքին շահակիցների ներգրավվածությունը այս գործընթացներում, փորձագիտական խումբը գտնում է, որ ԿՏՊՔ-ն հիմնականում համապատասխանում է Չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԿՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

ԿՏՊՔ-ում գործում են ուսանողների հավաքագրման տարբեր մեխանիզմներ: Քոլեջը սովորողներին իրազեկում և մասնագիտական կողմնորոշման հարցում օգնում է ամեն տարվա ապրիլ-մայիս ամիսներին այցեր կատարելով տարածաշրջանի տարբեր դպրոցներ՝ հանդիպումներ ունենալով աշակերտների հետ, որի ժամանակ աշակերտներին տրամադրվում է համապատասխան տեղեկատվություն քոլեջի յուրաքանչյուր մասնագիտության վերաբերյալ, տրամադրվում են բուկլետներ: Ուսանողների հավաքագրման մեխանիզմներից է նաև ԿՏՊՔ-ի կայքէջը և ֆեյսբուքյան էջը: Փորձագիտական առցանց այցը ցույց տվեց, որ ուսանողների մեծ մասին իրազեկել և մասնագիտական կողմնորոշման հարցում օգնել են ԿՏՊՔ-ում սովորող իրենց ընկերները, ինչը ԿՏՊՔ-ի համար ուսանողների ներգրավման ոչ ֆորմալ մեխանիզմ է:

ԿՏՊՔ-ում գործում են ուսանողների ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ: Ընդունելությունն իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգի համաձայն: Յուրաքանչյուր մասնագիտության համար հատկացվող տեղերի/վճարովի և անվճար/քանակը հաստատվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով: Ոլորտային մասնագիտությունների համար ընդունելությունն իրականացվում է քննությամբ («Դիզայն»-Գծանկար, «Ատամնատեխնիկական գործ», «Քույրական գործ», «Դեղագործություն» - Կենսաբանություն), իսկ ոչ ոլորտային մասնագիտությունների դեպքում ընդունելության հիմքը հիմնական կրթության

վկայականների, միջնակարգ կրթության ատեստատների կամ դիպլոմի ներդիրի միավորներն են:

Այն դիմորդներին, ովքեր դժվարանում են մասնագիտության կողմնորոշման հարցում, կարիերայի խորհրդատուն առաջարկում է մասնագիտական կողնորոշման ծառայություններ՝ տրամադրելով մասնագիտական թեստեր, որոնք բացահայտում են անձի մասնագիտական ուղղվածությունը, շահակիցների հետ զրույցում պարզ դարձավ, որ այդ թեստերն ուսանողների համար հետաքրքիր են և համարվում են արդյունավետ: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ մասնագիտական կողմնորոշման գործում ուսանողներին ուղորդում է նաև դպրոցի տնօրենը՝ դիմորդների հետ անհատական զրույցներ ունենալով:

2020 թ.-ի դրությամբ ԿՏՊՔ-ում դիմորդների աճ է նկատվում, ինչը նաև պայմանավորված է Հրազդանի պետական բժշկական քոլեջի հետ միացմամբ: ԿՏՊՔ-ում առկա են վճարովի և անվճար համակարգեր, ինչպես նաև տրամադրվում է կրթաթոշակ սեփական և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին: Կրթաթոշակ ստանում են թե՛ վճարովի, և թէ՛ անվճար համակարգում սովորող, լավ և գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողները: Գործում է նաև զեղչային համակարգ:

Ընդհանուր առմամբ ԿՏՊՔ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության հստակ մեխանիզմներ, սակայն քոլեջը չի իրականացրել այդ մեխանիզմների արդյունավետության գնահատում:

ԿՏՊՔ-ում գործում են ուսանողների կրթական կարիքներն ու պահանջմունքներն ուսումնասիրող մի շարք մեխանիզմներ: 2018 թ.-ին քոլեջը մշակել և հաստատել է հարցումների իրականացման կանոնակարգ, որի օգնությամբ ուսանողների շրջանում իրականացվում են ուսանողների կարիքների վերհանման հարցումներ: Փորձագիտական առցանց այցերից պարզ դարձավ՝ ուսանողները դեռևս ամբողջապես ծանոթ չեն հարցարաններին և չգիտեն, թե հարցումների արդյունքում քոլեջում ինչպիսի փոփոխություններ են կատարվել: ՄՈՒՀ-ում առկա է նաև առաջարկությունների և բողոքների արկղիկ, որի միջոցով ուսանողներն անանուն ձևով կարող են ներկայացնել իրենց խնդիրներն և առաջարկությունները, փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ արկղիկը յուրաքանչյուր ամսվա 15-ին բացվում է ՈւԽ անդամների և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից, ապա՝ ուսանողները բողոքներն ու առաջարկները տեսակավորում և քննարկում են քոլեջի ղեկավար կազմի հետ: Փորձագիտական առցանց այցի ընցթացքում շահակիցները նշեցին, որ արկղիկի միջոցով վեր են հանվել և լուծվել են խնդիրներ կապված լսարանում կախիչների տեղադրման հետ, իսկ ուսուցման պրոցեսում դասերը հետաքրքիր դարձնելու համար դասախոսների կողմից սահիկների /պրեզենտացիաներ/ և դիդակտիկ այլ նյութերի կիրառման առաջարկություններ են ներկայացվել:

Ուսանողները ներգրավված են նաև քոլեջի կառավարման խորհրդում, կառավարման խորհրդի ուսանողական կազմն ընտրվում է ՈւԽ-ի կողմից՝ քվեարկության միջոցով՝ հաշվի առնելով ուսանողի ուսման մեջ առաջընթացը և հասարակական ակտիվությունը: Փորձագիտական առցանց այցից և շահակիցների հետ զրույցներից պարզ դարձավ, որ կառավարման խորհրդում ուսանողների վերհանած խնդիրները հիմնականում կրթական բնույթի չեն, ավելի շատ վերաբերում են շենքային պայմանների բարելավմանը՝ սանիտարահիգիենիկ պայմանների բարելավում, ծխամանների տեղադրում և այլն: Պետք է փաստել, որ ուսանողները չեն պատկերացնում իրենց կարևորությունը ուսուցման գործընթացում փոփոխություններ կատարելու գործում: Ըստ շահակիցների հետ զրույցների՝ քոլեջի խորհրդի որոշումներին և ուսանողների հետ կապված այլ տեղեկատվություններին

ուսանողները տեղյակ են պահվում հետևյալ ձևերով՝ քոլեջում առկա ռադիոկապի, ուսխորհրդականների միջոցով, ովքեր ներկայացնում են տվյալ կուրսը, ավագների և կուրսղեկների միջոցով: Համավարակի պայմաններում գործում է ավագների միջոցով կուրսերին իրազեկելու և առցանց հարթակի կիրառման մեխանիզմները:

ԿՏՊՔ-ում գործում է կուրսղեկների ինստիտուտ, յուրաքանչյուր կուրսին կցված է կուրսղեկ, ում պարտականություններից է նաև սովորողների կրթական կարիքների վերհանումը: Կուրսղեկներն ուսանողների հետ աշխատում են նախապես մշակված պլաններով: Շաբաթական առնվազն 1 անգամ անցկացվում են կուրսղեկական ժամեր: Փորձագիտական առցանց այցերը և շահակիցների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ կարիքների վերհանման ամենավստահելի օղակը ուսանողների համար կուրսղեկներն են:

Ուսանողներն իրենց կարիքների մասին կարող են նաև բարձրաձայնել՝ դիմելով վարչական անձնակազմին, սակայն վարչական անձնակազմին դիմելու ժամանակացույց քոլեջում առկա չէ:

ԿՏՊՔ-ում ներդրվել են ուսանողների կարիքների վերհանման մի շարք մեխանիզմներ, սակայն ոչ միշտ է, որ այդ մեխանիզմները կանոնակարգված են:

ԿՏՊՔ-ում դասախոսական կազմի խորհրդատվության տրամադրման ժամանակացույց առկա չէ, փորձագիտական առցանց այցերի ընթացքում ուսանողները փաստեցին, որ դասախոսները պատրաստակամ են և հասանելի խորհրդատվություն տրամադրելու համար: Դասալսումների արդյունքում պարզ դարձավ, որ կան կուրսեր, որ ուսանողների մեծամասնությունը կամ գրեթե բոլոր ուսանողները տղաներ են: Պայմանավորված ՀՀ-ում տիրող ռազմական իրավիճակով ու միաժամանակ ուսուցման առցանց իրականացմամբ՝ բացակայությունների քանակը բավականին մեծ է (օր.՝ փոխադրումների կազմակերպումը և կառավարումը տրանսպորտում մասնագիտության դեպքում): Քոլեջում անցկացված և անցկացվող խորհրդատվական պարապմունքներն ունեն ոչ ֆորմալ բնույթ:

ՄՈՒՀ-ում գործում են նաև մի շարք խմբակներ՝ «Հասարակագիտություն» առարկայի խմբակ և «Գրքասերների ակումբ», խմբակների շրջանակում քննարկվող թեմաներն ընտրվում են հիմնականում ուսանողների առաջարկներով: Ըստ շահակիցների հետ զրույցների՝ այս խմբակներն օգնում են ուսանողներին հավելյալ տեղեկատվություն ստանալ իրավագիտության և իրավագիտակցության վերաբերյալ, ինչպես նաև ավելի լավ ճանաչել գրականության խոշոր ներկայացուցիչներին և նրանց աշխատանքները: Խմբակները ձևավորվել են ուսանողների առաջարկով, այնտեղ ներառված են ինչպես ուսանողներ, այնպես էլ դասախոսական և վարչական կազմերի ներկայացուցիչներ: Վերջին անգամ առցանց հարթակում կազմակերպվել և քննարկվել է Վ. Սարոյանի կյանքը և ստեղծագործությունները: Քոլեջում գործում է Կարիերայի կենտրոն: Կենտրոնի աշխատանքները կանոնակարգվում է համապատասխան կանոնակարգով: Ստորաբաժանման հիմնական նպատակն է՝ կարիերայի տեղեկատվության, խորհրդատվության, ուղղորդման աշխատանքների, ինչպես նաև կարիերայի պլանավորման կարողությունների ձևավորման միջոցով նպաստել աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, աջակցել իրենց մասնագիտությամբ զբաղվածության հնարավորությունների բացահայտմանը: Կենտրոնն ուսանողների համար իրականացնում է դասընթացներ հետևյալ թեմաներով՝ «Ինչպե՞ս կազմել մրցունակ աշխատանքային ինքնակենսագրական», «Ինչպե՞ս փնտրել աշխատանք», «Հաղորդակցություն» և այլն: Ստորաբաժանումը կազմակերպում է նաև հանդիպումներ գործատուների, զբաղվածության կենտրոնի հետ: Բացի այդ, շրջանավարտների լավագույն փորձը ուսանողներին փոխանցելու նպատակով կազմակերպում է հանդիպումներ շրջանավարտների հետ: Պետք է նշել սակայն, որ

փորձագիտական առցանց այցերը և շահակիցների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ ուսանողներն այդքան էլ տեղյակ չեն կարիերայի կենտրոնի աշխատանքներից:

Կարիերայի ստորաբաժանումն ունի մեկ հաստիք: Ստորաբաժանումն ապահովում է նաև շրջանավարտների հետ հետադարձ կապը, հավաքագրում է տեղեկատվություն շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ: Կարիերայի ստորաբաժանման գործառույթներից է նաև թափուր աշխատատեղերի հայտարարությունների հավաքագրում և ծանուցում ուսանողներին, սակայն փորձագիտական առցանց այցերը և տարբեր շահակիցների հետ հանդիպումները փաստեցին, որ այդ գործընթացը տեղի է ունենում ավելի շատ անձնային մակարդակում՝ առանձին դասախոսի կամ տնօրենի միջնորդությամբ: Շրջանավարտների հետ հետադարձ կապի մեխանիզմների թույլ լինելով է պայմանավորված այն, որ կենտրոնը չունի տեղեկատվություն այն մասին, թե վերջին տարվա ընթացքում կենտրոնի շնորհիվ քանի շրջանավարտ է աշխատանքի ընդունվել:

Քոլեջում ուսանողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվում է ՈՒԽ-ն: Ըստ ՈՒԽ-ի կանոնադրության՝ Քոլեջի ուսանողական խորհուրդը (այսուհետև՝ Խորհուրդ) ինքնակառավարման, ուսանողներին միավորող, նրանց շահերը պաշտպանող, ընտրովի ներկայացուցչական մարմին է: Փորձագիիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների մեծ մասի համար այն չի դիտարկվում որպես իրավունքների պաշտպանության համար ստեղծված մարմին, այն հիմնականում զբաղվում է ուսանողների որոշ կարիքների վերհանմամբ (կախիչների, աղբամանների տեղադրում լսարաններում և այլն) և տարբեր միջոցառումների կազմակերպմամբ: Կրթության վերաբերյալ խնդիրների լուծման համար ուսանողները դիմում են կուրսղեկներին, անհրաժեշտության պարագայում նաև՝ տվյալ ծրագրի կամ մոդուլի դասախոսին: Կառույցի ներսում գործում են մի շարք հանձնաժողովներ՝ մշակույթի, սպորտի, մշակույթի և այլն: Քոլեջում դեռևս չեն գործում ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման հստակ մշակված մեխանիզներ:

Հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավածությունն արտահայտվում է դասընթացների ընթացքում որոշ հետազոտական աշխատանքների կատարմամբ (ռեֆերատներ, անհատական աշխատանքներ) և ավարտական աշխատանքների իրականացմամբ: Պետք է նաև նշել, որ ավարտական աշխատանքներ ներկայացվում են միայն «Դիզայն», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությունների դեպքում: Փորձագիտական խումբը հետազոտական աշխատաքների դրական փորձ է համարում «Դիզայն» մասնագիտության շրջանակներում իրականացված տարբեր նախագծերը, որտեղ ուսանողներն իրականացնում են տարբեր մասշտաբների հաշվարկներ և ուսումնասիրություններ, պատրաստում տարբեր նախագծերի մակետներ: Հետազոտական աշխատանքների դրական փորձեր են նաև «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության մեջ կայքէջերի ստեղծումը, տարբեր բազաների հետ աշխատանքները, «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության մեջ ուսանողների կողմից տուրի երթուղի կազմակերպելը և այլն: Փորձագիտական առցանց այցերից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից ռեֆերատ աշխատանքների իրականացումը դիտվում է միայն որպես տարբեր աղբյուրներից տեղեկատվության հավաքագրում, տեղեկատվության վերլուծություններ հիմնականում աշխատանքներում չեն իրականացվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ում գործում են դիմորդների հավաքագրման տարբեր մեխանիզմներ, սակայն կան մեխանիզմներ, որոնք իրականացվում են տարերայնորեն և դրանց համակարգման ու արդյունավետության

գնահատման կարիք կա, ինչը կնպաստի դիմորդների հոսքի ավելացմանը: Քոլեջի ուսանողների թվաքանակը փաստում է այն մասին, որ նշված մեխանիզմները բավական արդյունավետորեն են կիրառվում, փորձագիտական խումբը կարևորում է ան փաստը, որ ուսանողները քոլեջ ընդունվում են հիմնականում ընկերների հայտնած գոհունակության հիման վրա, դա փաստում է քոլեջի բարձր վարկանիշի մասին:

Գովելի է այն փաստը, որ ԿՏՊՔ-ում ընտրության և ընդունելության մեխանիզմները հստակ են և կանոնակարգված, որը հանգեցնում է գործընթացի օբյեկտիվության պահպանմանը:

ԿՏՊՔ-ում գործում են ուսանողների կարիքների վերհանման մի շարք մեխանիզմներ, որոնցից մեկն էլ Որակի ապահովման պատասխանատուի կողմից իրականացրած հարցումներն են, սակայն փորձագիտական առցանց այցերից պարզ դարձավ, որ հարցումներից հետո հետադարձ կապի մեխանիզմները բացակայում են, որը հետագայում կարող է հանգեցնել նրան, որ այդ հարցումները ուսանողների կողմից անարդյունավետ մեխանիզմ կարող է համարվել, և ուսանողների ակտիվությունը և պատրաստակամությունը հարցերին պատասխանելուն կարող է նվազել:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջում նկատվում է ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմների համակարգման, դրանց արդյունավետության բացահայտման, մեխանիզմների արդիականացման և զարգացման կարիք:

Քոլեջում գործում են նաև խորհրդատվական ծառայությունների ոչ ֆորմալ մեխանիզմներ, սակայն արտակարգ իրավիճակի պայմաններում, երբ ուսանողների բացակայությունների քանակը համեմատաբար մեծ է, փորձագիտական խումբը գտնում է, որ այդ մեխանիզմներն արդյունավետ լինել չեն կարող, քանի որ խորհրդատվություն ստացող ուսանողների թվի աճ կգրանցվի, իսկ դասախոսի աշխատանքային բեռնվածությունը կդառնա ծանրաբեռնված և ոչ պլանավորված, որը կհանգեցնի նրան, որ այդ խորհրդատվությունները կամ չեն իրականանա, կամ էլ ուսանողների համար կդառնան թերի և ոչ արդյունավետ:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ քոլեջում գործում են խմբակներ, որոնք շարունակում են իրենց աշխատանքները առցանց միջավայրում նունպես:

Փորձագիտական խմբի համար դրական է այն, որ ուսանողների մոտ առկա է բարձր վստահություն կուրսղեկների նկատմամբ, դա է փաստում նաև այն հանգամանքը, որ կրթական խնդիրների վերաբերյալ ուսանողները առաջին հերթին դիմում են կուրսղեկներին: Այս փաստով է գուցե պայմանավորված այն, որ ուսանողները կարիքը չեն զգում կրթական հարցերի վերաբերյալ դիմել քոլեջի ՈւԽ-ին:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ քոլեջում գործում է կարիերայի կենտրոն և ուսանողների կարիերային նպաստող մեծ աշխատանքներ են կատարվում, սակայն անհրաժեշտություն կա, որպեսզի այդ աշխատանքներում ներգրավված լինեն ավելի շատ ուսանողներ և շրջանավարտներ, դա կհանգեցնի նրան, որ քոլեջում ուսանողներն ավելի տեղեկացված լինեն Կրաիերայի ստորաբաժանման աշխատանքներից և ավելի շատ ներգրավված լինեն նրա կողմից կազմակերպված նախագծերին, որն էլ կմեծացնի հետագայում ուսանողի աշխատանք գտնելու հնարավորությունները:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ քոլեջն ունի ուսանողների հետազոտական աշխատանքներում ներգրավելու դրական փորձեր, սակայն դրանք ոչ բոլոր մասնագիտություններում են առկա: Փորձագիտական խումբը գտնում է, որ ռեֆերատ աշխատանքներում միայն տարբեր աղբյուրներից տեղեկատվության հավաքագրումը չի կարող նպաստել ուսանողի ստեղծագործական, քննադատական և վերլուծական մտքի զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով հավաքագրման և ընդունելության համար գործող մեխանիզմների առկայությունը, սովորողներին տրամադրվող լրացուցիչ պարապմունքների կազմակերպումը, կրթական և այլ կարիքներ վերհանման համար գործող մեխանիզմները, ուսանողների վերլուծական միտքը զարգացնելու նպատակով ձեռնարկված արդյունավետ միջոցները, ուսանողների կարիերայի ապահովմանն ուղղված գործունեությունը, ուսանողների վստահությունն առ քոլեջ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԿՏՊՔ-ն համապատասխանում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԿՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

ԿՏՊՔ-ում գործում է դասախոսի կամ արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացակարգ, կան անցկացված մրցույթի դեպքեր: Գործում է նաև դասավանդողին ներկայացվող ՊԿՉ-ի ընդհանուր պահանջներ (կրթություն, աշխատանքային փորձ և այլն), ընդ որում ԿՏՊՔ-ի դասախոսները համապատասխանում են սահմանված պահանջներին: 2018 թ.-ից քոլեջում ներդրվել են պաշտոնի նկարագրեր, որոնցում ամրագրված են դասախոսի կոմպետենցիաները:

Մինչ աշխատանքի անցնելը աշխատողը ծանոթանում է իր պաշտոնի նկարագրին, իր կողմից կատարվող աշխատանքին առնչվող ներքին իրավական ակտերին, քոլեջի ներքին կարգապահական կանոններին, ինչպես նաև անվտանգության տեխնիկայի, սանիտարական, հակահրդեհային կանոններին և աշխատանքի պայմաններին: Նոր ընդունված դասախոսներն անցնում են փորձաշրջան:

ՈւՕ կազմի համար մրցութային ընթացակարգ քոլեջում առկա չէ: Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ ամբիոնի վարիչների մեծ մասը նոր էին նշանակվել իրենց պաշտոնին, այդ պաշտոնին նշանակվում էին 1 տարի ժամկետով:

ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են դասախոսական կազմի հստակ պահանջներ: Յուրաքանչյուր ծրագրի համար դասախոս ընտրելիս հիմք է ընդունվում, բազային կրթությունը, աշխատանքային փորձը, տվյալ ոլորտում արտադրական փորձը, մրցույթի և որակավորման արդյունքները, սակայն դեռևս հստակ սահմանված չեն ըստ առանձին կրթական ծրագրերի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները:

Ըստ անհրաժեշտության՝ դասախոսական կազմը համալրվում է գործնական փորձառություն ունեցող գործընկերներով՝ գործնական պարապմունքների

արդյունավետության բարձրացման նպատակով: Այսպիսի համալրումը քոլեջը դեռ բավարար չի համարում և մտադիր է ավելացնել: Միաժամանակ կարևորվում է աշխատակազմը իր շրջանավարտներով համալրելը (մասնավորաբար 2019 թ.-ին համալրվել է քոլեջը գերազանցությամբ ավարտած, կրթությունը բուհում շարունակած երիտասարդ կադրով, ով դասավանդում է նոր ներդրված մոդուլներ):

ԿՏՊՔ-ն իր ՌԾ-ում կարևորում է ՄԿԾ-ների նպատակների իրականացման համար անհրաժեշտ որակներ և մանկավարժական հմտություններ ունեցող ՈՒՕ և դասախոսական կազմի անհրաժեշտությունը: Առկա են հետևյալ փաստաթղթերը՝ Ղեկավար և մանկավարժական աշխատողների գնահատման, խրախուսման կամ պատասխանատվության ենթարկելու կանոնակարգ, Ամբիոններում դասալսումների անցկացման և քննարկման կանոնակարգ, Հարցումների անցկացման կանոնակարգ, Դասընթացի գնահատման կանոնակարգ:

ԿՏՊՔ-ում իրականացվում են դասալսումներ, ուսանողների շրջանում անանուն հարցումներ: Դասալսումերն իրականացվում են հիմնականում ամբիոնների վարիչների կողմից, քոլեջում գործում է նաև փոխադարձ դասալսումների մեխանիզմը, որոնց արդյունքները քննարկվում են ամբիոններում, սակայն խորը վերլուծության չեն ենթարկվում: Դասախոսական կազմի մասնագիտական կարողություններն ու հմտությունները գնահատելու համար ուսանողների շրջանում կատարվել են անանուն հարցումներ, որոնց արդյունքները որևէ խնդիր վեր չի հանել, ինչը խնդրահարույց է: Առավել ևս առկա չեն գործող գնահատման մեխանիզմների փոխկապակցման, արդյունքների համադրման վերլուծություններ:

Միաժամանակ, փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ ուսանողները հիմնականում գոհ են դասախոսներից:

ԿՏՊՔ-ի ՌԾ-ի խնդիրներից է ուսումնական գործընթացում մասնագիտական բարձր կարողություններով օժտված դասախոսական կազմի ներգրավումը՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ: Դասախոսները մասնակցել են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված մեթոդական վերապատրաստումների, որոնց առաջնային ներգրավվել են նոր աշխատակիցները: Քանի որ քոլեջը տարածաշրջանային է, ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներն անցկացվում են ԿՏՊՔ-ում: Այցի ժամանակ պարզվեց, որ դասախոսները փորձի փոխանակման, կատարելագործման համար հնարավորությունների անհրաժեշտություն են տեսնում:

Դասախոսական կազմի որոշ ներկայացուցիչներ վերապարաստվել են GIZ-ի կամ Save the children-ի հետ համագործակցության արդյունքում, սակայն վերապատրաստվողները սակավաթիվ են, ընդ որում այդ վերապատրաստումներին մասնակցության հնարավորությունը հենված չէ կարիքների ուսումնասիրման վրա:

Դասախոսները մասնակցում են վերապատրաստումների սեփական նախաձեռնությամբ, ինչի հարցում քոլեջը դերակատարություն չունի, առկա չեն աջակցման և խրախուսման մոտեցումներ: Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ դասախոսները վերապատրաստումների մասնակցության անհրաժեշտություն են տեսնում: Դասախոսների մասնագիտական վերապատրաստումների պլաններ չկան: Այլ ուսումնական հաստատությունների և Դասախոսական անձնակազմի հետ փորձի փոխանակման հնարավորություններ առկա չեն:

ԿՏՊՔ-ում դասախոսների շուրջ 85%-ը հիմնական աշխատակիցներ են: Քոլեջը կարևորում է երիտասարդ կադրերի ներգրավումը: Դասախոսական կազմի միջին տարքային շեմը տատանվում է 36-46-ի սահմանում: Դասախոսական կազմի կայունությունը ապահավելու համար ԿՏՊՔ-ի ներքին աշխատանքային կանոններում ամրակցված են

դասախոսների խրախուսման մեխանիզմները, սակայն փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ խրախուսման մեխանիզմները հստակեցված չեն: Որպես խրախուսում սովորաբար տրամադրվում է հավելյալ աշխատավարձ ամանորյա տոների ժամանակ: Առկա չէ ըստ հետազոտության դասավանդման և վարչական ոլորտներում իրականացված աշխատանքների դասախոսական կազմի ծանրաբեռնվածության վերլուծություն: Բացակայում են դասախոսների ներքին և արտաքին հոսունության վերլուծությունները:

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ կան դասախոսներ, ովքեր դասավանդում են ավելի քան 5 առարկա՝ նույնիսկ մինչև 10 առարկա: Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ առանձին դեպքերում քոլեջն ունի նեղ մասնագիտությամբ մասնագետների անհրաժեշտություն:

Սկսնակ դասախոսները ստանում են մեթոդական և մասնագիտական աջակցություն համապատասխան ամբիոնների դասախոսների կողմից և ուղղորդվում են վերապատրաստումների:

ԿՏՊՔ-ում առկա չեն մասնագիտական առաջընթացի ապահովման մեխանիզմներ: Առկա է դասախոսական կազմի միայն մեկ պաշտոն, այն է դասախոս: Ինքնակատարելագործման ոչ մի մեխանիզմ չի հանգեցնում մասնագիտական առաջընթացի, միաժամանակ առկա չեն դրանք խրախուսող մեխանիզմներ:

Վարչական և ՈւՕ աշխատակազմի հաստիքացուցակի ձևավորումը և աշխատանքային պարտականությունների սահմանումը, ըստ պաշտոնների, կարգավորում են կանոնադրությամբ, առանձին ստորաբաժանումների կանոնակարգերով, պաշտոնների նկարագրերով: ԿՏՊՔ-ում վարչական աշխատանքներն իրականացնելու համար գործում են համապատասխան ստորաբաժանումներ, որոնք սակայն շատ դեպքերում համալրված են մեկ աշխատակցով: Հարկ է հիշել, որ ԿՏՊՔ-ի ռազմավարությունը չի ունեցել իրականացման հստակ գործողությունների պլան: Չեն երևում ստորաբաժանումների աշխատանքային պլանների և ռազմավարության կապակցման մեխանիզմները, ինչը դժվարեցնում է ստորաբաժանումների աշխատանքի ըստ ռազմավարական նպատակների իրականացման արդյունավետությունը: Առանձին դեպքերում առկա է գործառույթների խտացում մեկ անձի համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ ԿՏՓՔ-ում գործում է դասախոսական կազմի ընտրության ընթացակարգ և միաժամանակ առկա է պատրաստակամություն ներգրավելու դասախոսական կազմը ինչպես գործատու, այնպես էլ ԿՏՊՔ-ի շրջանավարտ համապատասխան մասնագետներով, իսկ ոչ մրցութային կարգով ընդունված դասախոսների փորձաշրջան անցնելու հնարավորությունը թույլ է տալիս հասկանալ ընդունված մասնագետի համապատասխանությունը տվյալ պաշտոնին: Նաև դրական է այն, որ դասախոս ընտրելիս հաշվի է առնվում բազային կրթությունը, աշխատանքային փորձը, տվյալ ոլորտում արտադրական փորձը, մրցույթի և որակավորման արդյունքները, այս ամենը նպաստավոր է որակյալ և համապատասխան աշխատակից ընտրելու և ՄԿԾ-ի արդյունավետ իրականացման համար: Ամբիոնների վարիչների 1 տարի ժամկետով նշանակումը կարող է բացասական ազդեցություն ունենալ ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման և երկարատև պլանավորմամբ գործընթացների իրականացման տեսանկյունից:

ՈւՕ կազմի համար մրցութային ընթացակարգի բացակայությունը կարող է բացասական անդրադառնալ այդ գործընթացի առավել նպատակայնության վրա:

ԿՏՊՔ-ում սահմանված են մի շարք մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս գնահատել դասախոսական կազմի դասավանդման արդյունավետությունը, սակայն այդ մեխանիզմները թույլ չեն տալիս վերհանել խնդիրներ և փաստացի վեր չեն հանվել խնդիրներ։

Փորձագիտական խումբը կարևորում է դասախոսական կազմի՝ սեփական կարողությունները զարգացնելու և փորձի փոխանակման հնարավորություններից օգտվելու ձգտումը, սակայն խնդրահարույց է համարում այն, որ քոլեջում առկա չեն կարիքների վերհանման և դասախոսական կազմի գնահատման հստակ մեխանիզմներ, առկա չեն այդ կարիքներին համապատասխան նրանց կատարելագործմանն ուղղված միջոցառումներ կամ առնվազն կատարելագործմանն ուղղված գործունեության խրախուսման մոտեցումներ, առկա չեն դասախոսների առաջընթացի մեխանիզմներ, ինչը բացասական է անդրադառնում կատարելագործման գործընթացի վրա, որն էլ վտանգում է դասավանդման բարելավման գործընթացը։ Փորձագիտական խումբը կարևորում է նաև գործատուների հնարավորությունների կիրառումն այս ուղղությամբ, քանի որ քոլեջը նշում է այս ուղղությամբ սուղ ֆինանսական միջոցների մասին։

Փորձագիտական խումբը կարևորում է այն, որ քոլեջն ապահովում է սերնդափոխություն՝ մշտապես համալրելով դասախոսական կազմը երիտասարդ մասնագետներով, սակայն միաժամանակ խնդրահարույց է համարում նեղ մասնագիտությամբ մասնագետների բացակայությունն ու մի դասախոսի կողմից տարբեր մասնագիտական առարկաների դասավանդումը, ինչը կարող է հանգեցնել այդ առանձին առարկաների նպատկաների ոչ լիարժեք իրականացման, ինչն էլ կվտանգի ընդհանուր կրթական ծրագրի վերջնարդյունքների լիարժեք ապահովումը։

Քոլեջում չեն իրականացվում վարչական և ՈւՕ կազմերի գործունեության արդյունավետության գնահատումներ, ինչը կարող է հանգեցնել ըստ ռազմավարական ծրագրի իրականացվող աշխատանքի ոչ արդյունավետ բաշխման և ըստ պատասխանատուների և մարդկային ռեսուրսների ոչ արդյունավետ տեղաբաշխման։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԿՏՊՔ-ում գործում են դասախոսական անձանակազմի ընտրության ընթացակարգեր, նրանց գնահատման որոշ մեխանիզմներ, կարևորում են նրանց մասնագիտական և մանկավարժական կարողություններն ու հմտությունները, կարևորում է ինչպես տարիների փորձառությունը, այնպես էլ գործնական հմտությունները, ապահովում է երիտասարդ և համապատասխան որակներով կադերի համալրումը, կարևորում է ըստ հիմնական ռազմավարական նպատակների մարդկային ռեսուրսներով ապահովվածությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԿՏՊՔ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԿՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Ըստ ԿՏՊՔ-ի ռազմավարության՝ նախատեսվում է գիտահետազոտական աշխատանքների իրականացում, սակայն չեն նշվում այդ ուղղությամբ հավակնությունները: Ռազմավարական նպատակներից է կրթական բարեփոխումների առաջնորդողի, տարածողի դերի ստանձնումը:

Դասախոսական կազմի գիտահետազոտական գործունեության իրականացման քաղաքականություն և ընթացակարգեր չկան: Դասախոսական կազմին հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար խրախուսման մեխանիզմները բացակայում են:

Դասախոսական կազմի հետազոտական գործունեության արդյունքները չեն անդրադառնում նրա մասնագիտական առաջընթացի վրա (թերևս նման քաղաքականությունը բացակայում է ընդհանրապես):

Քոլեջը հետազոտական նախագծերում միջազգային համագործակցության բացակայությունը պայմանավորեցնում է դասախոսական անձնակազմի օտար լեզվի չիմացությամբ, սակայն նման նախագծերի ու հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվում դասախոսներին և առկա չեն նման նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը խրախուսող մեխանիզմներ:

Ընկամենը 1 դասախոս ունի միջազգային ամսագրում տպագրված հոդվածներ, որում քոլեջը դերակատարություն չունի: 3 դասախոսների կողմից տարբեր տարիների տպագրվել են ուսումնական ձեռնարկներ (վերջին 5 տարիներին թվով 8-ը), որոնք գործածելի են ուսումնական գործընթացում, սակայն դրանց տպագրման կամ տպագրումը խրախուսելու հարցում քոլեջը դերակատարություն չունի:

ԿՏՊՔ-ում իրականացվող հետազոտությունների շնորհիվ վերանայվում են որոշ ծրագրեր: Մասնավորապես՝ ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվող մշտադիտարկումների արդյունքում մշտադիտարկող հանձնաժողովի կողմից առաջարկություններ են արվում՝ ներկայացնել քոլեջի դիտարկումները ՄԿԾ-ներում փոփոխությունների կատարելու վերաբերյալ: Ամբիոնների քննարկման արդյունքում գրվում են համապատասխան առաջարկությունները, որոնք հետագայում հաշվի են առնվում նոր կրթական չափորոշիչների մշակման ժամանակ:

Քոլեջը չունի քաղաքականություն, որ դասախոսը ուսումնասիրի իր մասնագիտության միջազգային փորձը: Միջազգային փորձի ուսումնասիրություն որպես այդպիսին չի իրականցվում, բացառությամբ մեկ-երկու դեպքի՝ դասախոսների նախաձեռնությամբ[6]:

Հետազոտությունների իրականացումն ապահովող մոտեցում է դիպլոմային աշխատանքների շրջանակներում ներկայացվող պահանջները ուսանողների նկատմամբ, որոնք ոչ բոլոր մասագիտությունների ուղղությամբ են: Քոլեջում իրականացվում են կուրսային աշխատանքներ, ռեֆերատներ, անհատական և ինքնուրույն աշխատանքներ, նախագծային աշխատանքներ, ստենդներ, պաստառներ, մակետներ և այլն, որոնք միտված են ճանաչողական, վերլուծական և գործնական կարողությունների զարգացմանը և առանձին դեպքերում վեածվում են հետաքրքիր ուսումնասիրությունների: Միաժամանակ

[6] Ավելացվել է քոլեջի հետ քննարկման արդյունքում:

շահակիցների հավաստմամբ կա կուրսային աշխատանքների պակաս: Հանձնարարականներն հիմնականում տրված են թեստերի տեսքով, որոնք միտված չեն հետազոտական և վերլուծական կարողությունների զարգացմանը:

Ուսանողները հնարավորություն ունեն հետազոտական աշխատանով զբաղվել ԿՏՊՔ-ում իրականացվող ուսումնական, արտադրական պրակտիկաների ժամանակ, սակայն սա ընդհանուր առմամբ տեղի չունի: Առկա են դեպքեր, երբ ուսանողներն ակտիվություն են ցուցաբերում արտադրական, նախադիպլոմային պրակտիկաների շրջանակում, դասախոսներն էլ աջակցում են: 2020 թ.-ի հունվարին «Ջերմատնային տնտեսություն» մասնագիտության շրջանակներում «Գրին ֆերմեր» ՍՊԸ-ում անցկացված պրակտիկայի ընթացքում ուսանողները հնարավորություն են ունեցել հետազոտություն իրականացնելու, իսկ ուսանողներից մեկի կողմից առաջարկվել է նորարարություն՝ ուղղված աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպմանը: «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության ուսանողների կողմից մշակվել և իրականացվել է զբոսաշրջային տուրփաթեթ, այս շրջանակում իրականացվել ուսումնասիրություն: Դիզայն մասնագիտության շրջանակներում նույն խմբաբնտանիքին պատկանող զարդանախշերով ժամանակակից զարդանախշեր ստեղծելիս իրականացվում է ուսումնասիրություն: Իրականացվել են ուսումնասիրություններ նաև Արևային էներգիայի օգտագործման տեխնոլոգիաների վերաբերյալ: «Դիզայն» մասնագիտությամբ շրջանակներում պրակտիկ աշխատանքները իրականացվում են բնության գրկում, որտեղ ուսանողները հնարավորություն են ստանում ազատ ստեղծագործելու և կատարելու որոշակի ուսումնասիրություններ:

Որոշ մասնագիտությունների համար քոլեջը գործատու-գործընկեր չունի, պրակտիկաները կազմակերպվում են քոլեջում՝ լսարանային պայմաններում, ինչը լուրջ խոչընդոտներ է ստեղծում ուսանողներին հետազոտական աշխատանքներով զբաղվելու համար:

Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ քոլեջում առկա ռեսուրսային բազան բավարար չէ հետազոտությունների իրականացման համար:

Հետազոտական աշխատանքներն ընդհանուր առմամբ կապված չեն անմիջապես գործատուների հետ:

Դատողություններ: ԿՏՊՔ-ն չունի հետազոտության ոլորտում սահմանված հստակ հավակնություններ: Փորձագիտական խումբը կարծում է, որ ԿՏՊՔ-ն կարող է նման հավակնություններից մեկը դարձնել տարածաշրջանում կրթական բարեփոխումների առաջնորդողի, տարածողի դերի ստանձնումը, հատկապես որ առկա են կրթական ծրագրերի բարեփոխման դերում հանդես գալու առանձին դեպքեր և մարդկային ներուժ, սակայն այս հանգամանքին խոչընդոտող է նաև կրթական ծրագրերի առումով միջազգային փորձի ուսումնասիրությունների, ինչպես նաև դրանց մեխանիզմների բացակայությունը:

Դասախոսական կազմի գիտահետազոտական գործունեության իրականացման քաղաքականության, ընթացակարգերի, ինչպես նաև հետազոտությունների իրականացումը խրախուսելու մեխանիզմների բացակայությունը վտանգում է այդ ուղղությամբ դասախոսների կատարելագործմանն ուղղված գործունեությունը:

Նման գործունեությունը հանրակրթական ոլորտում մասնագիտական առաջընթացի բաղադրիչ է հանրակրթական և բուհական ոլորտում, առաջինի դեպքում կարգավորվում է ԿԳՄՍ նախարարության կողմից, երկրորդ դեպքում՝ համապետական մեխանիզմներին համահունչ բուհերի առանձնակի մոտեցումներով, իսկ միջին մասնագիտական կրթության ոլորտը, որը այս հարցում ինքնավարության է թողնված, բաց է մնում:

Միաժամանակ առկա չեն մեխանիզմներ, որոնց միջոցով դասախոսական կազմը կիրազեկվեր քոլեջներին վերաբերող հետազոտական (նաև՝ միջազգային) նախագծերի վերաբեյալ: Այս ամենի արդյունքում դասախոսներն ընդհանրապես ներգրավված չեն հետազոտական (այդ թվում՝ միջազգային) նախագծերում:

Դասախոսական կազմի սակավաթիվ ներկայացուցիչներ ունեն հետազոտության արդյունքներ տպագրված հոդվածների և ուսումնական ձեռնրկների տեսքով, որոնք սեփական նախաձեռնության արդյունք են:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ քոլեջում առկա են մեխանիզմներ ուսանողների վերլուծական, հետազոտական գործունեության ապահովման համար՝ դիպլոմային, կուրսային և նախագծային աշխատանքների, ռեֆերատների միջոցով, ինչպես նաև պրակտիկաների շրջանակում: Կարևոր է, որ այս ուղղությամբ առկա է լավ փորձ, և չնայած առկա չեն ինստիտուցիոնալ մեխանիզմներ ուսանողների այդ գործունեությունը խրախուսելու, սակայն դասախոսները խրախուսում են իրենց վերապահված իրավունքների շրջանակում: Միաժամանակ, փորձագտական խումբը կարևորում է, որ այս մոտեցումները ոչ թե խիստ լոկալ բնույթ կրեն, այլ տարածվեն և համընդհանուր բնույթ կրեն:

Քանի որ քոլեջում առկա ռեսուրսային բազան բավարար չէ հետազոտությունների իրականացման համար և այս առումով նաև սուղ են ֆինանսական միջոցները, փորձագիտական խումբը կարևորում է գործատուների հետ համագործակցության շրջանակի հստակեցումը, դրա նպատակայնությունը և ռազմավարական առաջնահերթությունների հետ փոխկապակցումը: Տարբեր կրթական ծրագրերի ուղղությամբ համապատասխան համագործակցության բացակայությունը վտանգում է նաև այդ մասնագիտություններով ուսանողների վերլուծական, հետազոտական աշխատանքների իրականացման հնարավորությունները: Միաժամանակ այս գործընթացներին կարևորում ենք դասախոսական կազմի ներգրավումը, ինչը հնարավորություններ կստեղծի դասախոսների կատարելագործման առումով՝ միաժամանակ բարձրացնելով ուսանողների վերլուծական, նորարարական, հետազոտական գործունեության արդյունավետությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս ԿՏՊՔ-ում սահմանված չեն հետազոտական ոլորտում հետաքրքրություններն ու հավակնությունները, առկա չեն միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, հետազոտությունների իրականացման հստակ քաղաքականություն, ընթացակարգեր և խրախուսման մեխանիզմներ չկան, բացի այդ բացակայում է միջազգայնացումը հետազոտական ոլորտում, հստակ չեն հետազոտության և ուսումնառության միջև կապերը, այս առումով նպատակային չեն գործատուների հետ համագործակցության շրջանակները, դասախոսները չեն իրականացնում միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություններ՝ փորձագիտական խումբը համարում է, որ ԿՏՊՔ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԿՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

ԿՏՊՔ-ն իր զարգացման ռազմավարական ծրագրում խնդիր է դրել հետևողականորեն իրականացնել նպատակային միջոցառումներ ուղղված մասնագիտությունների կրթական ծրագրերի նյութատեխնիկական ռեսուրսների ապահովմանն ու բարելավմանը, 2020 թվականի տվյալներով քոլեջում, որը զբաղեցնում է 3600 քառ. մ տարածք, սովորում է շուրջ 570 ուսանող, որոնց համար ուսումնական գործընթացն իրականացվում է 1 մասնաշենքի 33 լսարաններում: քոլեջում գործում է 2 լաբարատորիա, համակարգչային 3 լսարաններ, 7 կաբինետ, 3 արհեստանոց: Փորձագիտական առցանց այցի ընթացքում շահակիցների հետ զրույցից պարզ դարձավ, որ քոլեջը ռեսուրսային առումով որոշակիորեն ինքնաբավ է: Համակարգչային լսարաններն ապահովված են ժամանակակից և համապատասխան տեխնիկայով, լսարաններից 1-ում գործում է ինտերնետ կապ: 2010 թ.-ին ուսումնական հաստատությունը հիմնել է անհրաժեշտ էլեկտրական սարքավորումներով փոխգործուն ուսումնական լսարան՝ Smart գրատախտակով, պրոյեկտորով և համակարգիչներով կահավորված, որոնք ուղղված են ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը: 2017 թ.-ին քոլեջը պետության կողմից ստացել է քառասուն միլիոն դրամ աջակցություն քոլեջի պայմանները բարելավելու համար: Ուսումական հաստատությունը ֆինանսական աջակցություն է ստանում նաև ՄԱԿ-ի և Եվրոպական հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում: Քոլեջում գործում է նաև երթևեկության կաբինետ, որը վերազինվել է մեքենայի մակետով, որի օգնությամբ ուսանողը սովորում է մեքենայի կառավարումը: Քոլեջում գործում է գրադարան, որն իր գործունեությունը ծավալում է ղեկավարվելով գրադարանային գործի և տեղեկատվության մասին ՀՀ օրենքով: Փորձագիտական առցանց այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջը ժամանակակից մասնագիտական գրականության համալրման կարիք ունի, դա են փաստում նաև Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացրած հարցման արդյունքում ուսանողների ցածր գնահատականը գրադարանային ֆոնդի վերաբերյալ: Փորձագիտական առցանց այցի ընթացքում «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտության մի շարք դասախոսներ նշեցին, որ մասնագիտության վերաբերյալ միջին մասնագիտական կրթության համար հայալեզու դասագրքերը բացակայում են, այդ պատճառով կիրառում են բուհական դասագրքեր: Քոլեջում առկա է համացանցային հասանելիություն՝ այդ թվում Wi-Fi գոտի:

Քոլեջում գործում է ճաշարան, մարզասրահ, բուժկետ և արխիվ, ՄՈՒՀ-ն ունի նաև նիստերի դահլիճ քննարկումների և հանդիպումների կազմակերպման համար: Փորձագիտական առցանց այցի ընթացքում քոլեջի հիմնական շահակիցները նույնպես փաստեցին, որ քոլեջի ռեսուրսային և նյութատեխնիկական բազան հագեցված է, և կրկին պլանավորվում են բարելավման աշխատանքներ:

ԿՏՊՔ-ի ֆինանսավորումը կատարվում է երկու տարբերակով՝ բյուջետային և արտաբյուջետային: Բյուջետային մուտքերը ձևավորվում են ուսանողների վարձավճարներից, դրամաշնորհներից և կարճաժամկետ ծրագրերի ներդրումներից: ԿՏՊՔ-ում ֆինանսական հոսքերի կառավարումն ու վերահսկողությունն իրականացնելու համար կազմվում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ: Բյուջեի կատարողականը

ներկայացվում է ֆինանսական տարվա ավարտից հետո փաստացի տվյալների հիման վրա: ֆինանսական միջոցների գերակշիռ մասը գոյանում է ուսման վճարներից ուսումնական տարվա ընթացքում ներդրված կարճաժամկետ ծրագրերից: ԿՏՊՔ-ն հիմնական ուսումնական գործունեությունից ստացված մուտքերից բացի այլ կայուն ֆինանսական ներհոսքեր չունի:

ՄՈՒՀ-ի ծախսերի հիմնական մասը կազմում են աշխատավարձային ֆոնդը, պետք է նշել, որ քոլեջ այցի ժամանակ արձանագրվեց, որ աշխատավարձի բարձրացում քոլեջում տեղի չի ունեցել:

ԿՏՊՔ-ում չկա կրթական ծրագրերի իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցների բաշխման և կառավարման միասնական քաղաքականություն: Քոլեջի տարեկան բյուջեն հաստատում է քոլեջի կառավարման խորհուրդը, ծախսերի պլանավորման ժամանակ հաշվի են առնվում ԿՏՊՔ-ի ստորաբաժանումների կարիքները: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ամբիոնները քոլեջի ղեկավարությանն են ներկայացնում հաջորդ տարվա ուսումնական ծանրաբեռնվածությունները: Ռեսուրսների բաշխման մեխանիզմ է նաև առանձին ստորաբաժանումների հայտերի հիման վրա ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների գնումը ԿՏՊՔ-ում գնումների և մատակարարման բաժնի կողմից: Փորձագիտական առցանց այցի ժամանակ նաև նշվեց, որ առանձին դասախոսներ կարող են դիմել քոլեջի տնօրենին ուսումնական տարվա ընթացքում և ձեռք բերել, օրինակ՝ անհրաժեշտ գրականություն:

ՄՈՒՀ-ում ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնությունը գնահատելու մեխանիզմներ չկան:

ԿՏՊՔ-ում կրթական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը կատարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն: Քոլեջը յուրաքանչյուր տարվա սկզբին կազմում է գնումների պլան, որը ներառում է առաջիկա ֆինանսական տարվա համար պահանջվող ռեսուրսները և դրանց գնման գործընթացը: Գործող կրթական ծրագրերի ռեսուրսային ապահովվածության գնահատման մեխանիզմներից է հանդիսանում կրթական ծրագրերի վերանայումը, որից ելնելով գնահատվում է ծրագրի ռեսուրսային ապահովվածությունը և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ռեսուրսներ են ձեռք բերվում: Քանի որ ընդունելությունը կազմակերպվում է պլանավորված և ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված և լիցենզավորման տեղերի թվին համապատասխան, ուստի կարիքների կտրուկ ավելացումներ կամ նվազեցումներ, որպես կանոն, տեղի չեն ունենում: Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված երեք ՄԿԾ-ները հիմնականում ապահովված են համապատասխան ռեսուրսային բազայով: Պետք է նաև նշել, որ կան նաև մոդուլներում սահմանված արդյունքներ, որոնք միայն քոլեջի ռեսուրսային բազայով հնարավոր չէ ապահովել ուսանողի մոտ, օրինակ՝ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտության «Միջպետական փոխադրումներ» մոդուլի շրջանակներում անհրժեշտություն է առաջանում, որ ուսանողները գնան մաքսատներ, տեսնեն և կիրառեն այն սարքավորումները, որոնցով ստուգվում է մեքենայի տեխնիկական վիճակը, բեռները և այլն, նմանատիպ սարքավորումներ քոլեջում առկա չեն:

ԿՏՊՔ-ում փաստաթղթաշրջանառությունը և փաստաթղթերի կառավարումը, ներքին և արտաքին փաստաթղթերի շարժը կատարվում է գործավարության կարիքներին համապատասխան: 2013 թ.-ից քոլեջում գործում է արտաքին փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգը: Քոլեջն ունի պաշտոնական էլեկտրոնային փոստ, ֆեյսբուքյան էջ և քոլեջի կայքէջ, որոնց միջոցով իրականացվում է տեղեկատվության տարածում: Ներքին փաստաթղթաշրջանառությունը կատարվում է թղթային տարբերակով: ԿՏՊՔ-ի տարբեր

ստորաբաժանումների գործունեությունն արտացոլող փաստաթղթերի արխիվացումը կատարվում է արխիվավարի կողմից:

ԿՏՊՔ-ն իր շահակիցների համար անվտանգ միջավայրի ստեղծման և նրանց անվտանգության պահպանման ուղղությամբ իրականացրել է մի շարք աշխատանքներ, որի միջոցով բարձրացել է քոլեջի անվտանգությունը: Քոլոջում ներդրվել է ներքին հսկողության համակարգ, անվտանգության ձայնային համակարգ, հակահրդեհային անվտանգության համակարգ, ներքին ռադիոհամակարգ: Սակայն պետք է նաև նշել, որ գնահատված և վերլուծված չեն ներդրված համակարգերի աշխատանքների արդյունավետությունն ու նպատակայնությունը:

ԿՏՊՔ-ի բոլոր հարկերում փակցված են տարհանման սխեմաներ, հակահրդեհային անվտանգության համար կան անհրաժեշտ քանակով կրակմարիչներ, որոնք ԱԻՆ-ի հսկողությամբ պարբերաբար թարմացվում են: Քոլեջն ունի անհրաժեշտ թվով մուտքեր: Փորձագիտական առցանց այցի ժամանակ՝ շահակիցների հետ զրույցում, պարզ դարձավ, որ քոլեջում թեքահարթակները բացակայում են: Քոլեջում գործում է բուժկետ, որը տեղակայված է երկրորդ հարկում: Բուժկետն ունի ռեսուրսային ապահավվածություն և սպասարկում է քոլեջի ամբողջ կազմին: Քոլեջում կա երկու մարզադահլիճ և կից գործող մարզասրահ:

ԿՏՊՔ-ում ուսանողների շրջանում իրականացվում են հարցումներ ռեսուրսների ապահովածության վերաբերյալ: Դասախոսական կազմը նման հարցումների չի մասնակցում: Հարցաշարը կազմված է այնպես, որ ուսանողը կարողանա գնահատել 1-5 սանդղակով: Վերլուծությունն իրականացվում է միայն այդ գնահատականների միջինով: Քոլեջի կողմից ներկայացված բովանդակությունը փաստում է այն մասին, որ հարցումը կատարվել է մեկ անգամ: Հարցումները ցույց են տալիս, որ ուսանողները քոլեջի ռեսուրսային բազայից ունեն հիմնականում միջին կամ բարձր բավարարվածություն: Վերլուծությունը թույլ չի տալիս հասկանալու, թե քոլեջը հարցումների արդյունքում դուրս բերած միջին գնահատականից ինչ քայլեր է ձեռնարկելու կամ պլանավորելու այդ կարիքների բավարարմանն ուղղված: Փորձագիտական առցանց այցերը ցույց տվեցին, որ քոլեջի շահակիցները հիմնականում բավարարված էին քոլեջի ռեսուրսային բազայից, հիմնական կարիքը դրսևորվում էր արդի հայալեզու մասնագիտական գրականության պակասով:

ԿՏՊՔ-ում ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության վերաբերյալ պարբերաբար կիրառվող և արդյունավետ մեխանիզմ չկա:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում ԿՏՊՔ-ի ջանքերը՝ ուղղված քոլեջի ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ ռեսուրսային բազայի ապահովմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԿՏՊՔ-ի ջանքերը միտված իր առաքելության և ռազմավարական նպատակների իրականացման համար համապատասխան ռեսուրսներ տրամադրելուն, չնայած նրան, որ ֆինանսական միջոցները սահմանափակ են, քոլեջի նյութատեխնիկական բազան բավականին հագեցած է, քոլեջի շենքը ևս գտնվում է բարվոք վիճակում, լսարանները վերանորոգված և կահավորված են համապատասխան պարագաներով: Ռեսուրսային բազայի հարստացումը հիմնականում կատարվում է միջազգային դրամաշնորհային ծրագրի շրջանակում, ինչպես նաև կարճաժամկետ ծրագրերի ներդրումներից: Դրական է այն հանգամանքը, որ քոլեջը հատկացնում է որոշակի գումարներ քոլեջի լսարանային, լաբարատոր պայմանների, գրադարանային ֆոնդի և այլ ենթակառուցվածքների համալրման բարելավման և արդիականացման համար, որի արդյունքում քոլեջն ունի մասնագիտական ռեսուրսներով ապահովված կաբինետներ, համակարգչային լսարաններ, մարզադահլիճ, ավտոճանապարհային երթևեկության լսարան,

զբոսաշրջության բաժնի համար նախատեսված լսարան՝ համապատասխան մասնագիտական ռեսուրսային բազայով: Առաջիկայում քոլեջը նախատեսել է ձեռք բերել լինգաֆոնային սարքեր, ինչը ևս կբարձրացնի ուսուցման որակը: Քոլեջի գրադարանը կարիք ունի նորագույն մասնագիտական գրականության: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ գրադարանը թվայնացման գործընթացում է, որը թույլ կտա նաև ձեռք բերել ոչ միայն տպագիր գրքեր, այլ նաև՝ էլեկտրոնային, որոնք ֆինանսապես ավելի մատչելի կլինեն քոլեջի համար: Տարբեր գրադարանային ցանցերին անդամակցությունը կհանգեցնի տարբեր ոլորտներում տեղի ունեցող վերջին զարգացումների տեղեկատվության բարձրացմանը, հետազոտական և ուսումնական գործընթացների բարելավմանը:

ԿՏՊՔ-ն դեռևս չունի ֆինանսական ռեսուրսների բաշխման և կառավարման հստակ քաղաքականություն՝ ըստ գերակա ռազմավարական ուղղությունների, ինչը կարող է խոչընդոտել ռազմավարական նպատակների իրականացմանը: Ռեսուրսների սղությունը թույլ է տալիս լուծել միայն հրատապ խնդիրներ, այնուամենայնիվ, ԿՏՊՔ-ում փորձում են ֆինանասները արդյունավետ կառավարել: ԿՏՊՔ-ում բյուջեն հիմնականում ձևավորվում է ուսանողների վարձավճարներից, որը կայունության տեսանկյունից կարող է խնդիրներ առաջացնել, այս առումով ԿՏՊՔ-ում չկա ֆինանսական մուտքերի բազմազանեցման մշակված քաղաքականություն, սակայն փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ քոլեջն իրականացնում է կարճաժամկետ դասընթացներ, որոնք քոլեջին ապահովում են արտաբյուջեի համալրմամբ: ֆինանսական ռեսուրսների բաշխման և օգտագործման արդյունավետության վերլուծության բացակայությունը թույլ չի տալիս գնահատել և վերլուծել քոլեջի ֆինանսական կայունության ցուցանիշը և զարգացման հնարավորությունները: Դրական է, որ քոլեջում առկա է արտաքին փաստաթղթաշրջանառությունը կառավարելու համակարգ, սակայն ներքին փաստաթղթաշրջանառությունը տեղի է ունենում թղթային ավանդական տարբերակով, քոլեջում մի շարք փաստաթղթեր կազմվում են ձեռագիր, որը դժվարություններ է առաջացնում դրանց հասանելիության հետ կապված, քանի որ ներկայումս քոլեջի մի շարք գործընթացներ իրականացվում են առցանց միջավայրում: Քոլեջում դեռևս չկան նպաստավոր պայմաններ հաշմանդամություն ունեցող ուսանողների համար:

Քոլեջում տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելության և արդյունավետության գնահատման հիմնական մեխանիզմը հարցումներն են, որոնք իրականցվել են միայն ուսանողների շրջանում մեկ անգամ, մեխանիզմը թույլ չի տալիս լիարժեք բացահայտել նյութատեխնիկական հագեցվածության կամ այլ ռեսուրսների ձեռքբերման վերաբերյալ կարիքի բավարաման բացահայտմանը: Քոլեջի ռեսուրսների և ծառայությունների բավարարվածության վերաբերյալ պարբերաբար իրականացվում են հարցումներ, որը թույլ է տալիս քոլեջին վեր հանել իր բացթողումները: Ռեսուրսային բավարավածության վերաբերյալ մեխանիզմների բացակայությունը կարող է վտանգել ֆինանսների բաշխման և ռեսուրսների ձեռքբերման ճիշտ պլանավորմանը և ձեռքբերմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԿՏՊՔ-ն ջանքեր է ներդնում ռեսուրսների բարելավման և հարստացման ուղղությամբ, կրթական ծրագրերի իրականացման համար ապահովում է անհրաժեշտ միջավայր, ապահովում է ներքին շահակիցների առողջության և անվտանգության պահպանման ծառայություններ, ունի արտաքին փաստաթղթաշրջանառության համակարգ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է չափորոշիչ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: ԿՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է բավարար:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

ԿՏՊՔ-ն ունի ներքին հաշվետվողականության որոշակիորեն ձևավորված համակարգ: Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումները ներկայացնում են իրենց հաշվետվություններն՝ ըստ իրենց կառուցվածքային ենթակայությունների՝ ամբիոններն ուսումնական մասին, կարիերայի կենտրոնը՝ տնօրենին և այլն: Ըստ քոլեջի ներկայացրած ինքնավերլուծության՝ ԿՏՊՔ-ի հիմնական հաշվետու փաստաթուղթը տարեկան /կիսամյակային/ հաշվետվությունն է, որն իր մեջ ներառում է քոլեջի գործունեության բոլոր բնագավառներն ու հիմնախնդիրները, փորձագիտական առցանց այցերը ցույց տվեցին, որ նման հաշվետվողականության մեխանիզմ քոլեջում առկա չէ:

Քոլեջի տնօրենը տարեկան 2 անգամ ֆինանսական հաշվետվություն է ներկայացնում քոլեջի Խորհրդին ֆինանսական եկամուտների և ծախսերի, կատարողականի վերաբերյալ: Հաշվետվությունն իր մեջ չի պարունակում տեղեկատվություն ստորաբաժանումների աշխատանքի բովանդակության վերաբերյալ: Քոլեջում հաշվետվողականութան ներկայացման հստակ ձևաչափ առկա չէ: Խորհրդին ներկացրած հաշվետվությունները ոչ մի տեղում չեն հրապարակվում:

ԿՏՊՔ-ի ներքին հաշվետվողականության տարածման մեխանիզմներից է նաև քոլեջի ռադիոհանգույցը, որի միջոցով ներքին շահակիցների տեղեկացվում է քոլեջում իրականացվող միջոցառումների մասին:

Քոլեջը հաշվետվություն է ներկայացնում նաև Լիազոր մարմնին՝ ԿԳՄՍ նախարարությանը, հաշվետվություններն իրենց մեջ ներառում են ֆինանսական ցուցանիշներ, ուսանողների շարժ, դասախոսական անձնակազմի շարժ, վերջիններիս որակավորման, ստաժի և վարած դասընթացի մասին տեղեկատվություն և ընդունելության արդյունքներ: ԿՏՊՔ-ն գործունեության առանձին ուղղություններով հաշվետվություններ է ներկայացնում համապատասխան գերատեսչություններին, օրինակ՝ Կարիերայի կենտրոնը եռամսյակային հաշվետվություն է ներկայացնում ԿԳՄՍ նախարարություն, քոլեջը հաշվետվություններ է ներկայացնում նաև ՄԿՈՒԶԱԿ-ին և վիճակագրական վարչությանը: Միաժամանակ ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվում են ուսումնասիրություններ փորձագետների կողմից:

ԿՏՊՔԻ-ի պլանավորումները և հաշվետվությունները չեն բխում ԿՏՊՔ-ի ՌԾ-ի առաջնահերթություններից:

ԿՏՊՔ-ում ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և հասանելիության ապահովման նպատակով գործում են հետևյալ գործիքները՝ ԿՏՊՔ-ի պաշտոնական կայքէջը, տեղեկագրերը, ԶԼՄՆ-երը, ԿՏՊՔ-ի, նրա առանձին ստորաբաժանումների ֆեյսբուքյան էջերը և սոցիալական հարթակները (http: //armcom. am/, dasaran.am, dimord.emis.am) :

Թափանցիկության ապահովման նպատակով ՄՈՒՀ-ի կայքէջում տեղադրված են քոլեջի գործունեության կանոնակարգերը, տեղեկատվություն քոլեջում գործող կրթական ծրագրերի վերաբերյալ, պետք է նշել նաև, որ քոլեջի կայքէջում եղած տեղեկատվությունը բավականին սահմանափակ է, և կայքէջն ունի թարմացման և զարգացման կարիք: Կայքէջում և մնացյալ հարթակներում մանրամասն ներկայացված չեն կրթական ծրագրերը, նրանց

մրցակցային առավելությունները, որակի ապահովման համակարգի աշխատանքները և այլն, որոնք ցույց են տալիս Կրթական ծրագրերի արդյունավետությունը:

ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապի ձևավորման նպաստող կապի հետևյալ մեխանիզմները՝ ԿՏՊՔ-ի պաշտոնական կայքէջում գործում է հետադարձ կապ բաժինը, որտեղ նշված են քոլեջի հետ կապ հաստատելու հիմնական ձևերը՝ քոլեջի էլեկտրոնային հասցեն, գտնվելու վայրը և հեռախոսահամարը, ինչպես նաև ուղղորդում է տրվում դեպի քոլեջի ֆեյսբուքյան էջ: Քոլեջի հետադարձ կապի միջոց է նաև ֆեյսբուքյան էջերի հաղորդակների օգտագործումը: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմ քոլեջը համարում է ֆեյսբուքյան էջը: ԿՏՊՔ-ն նաև կապեր է հաստատել տարբեր դպրոցների և հասարակական կազմակերպությունների հետ, որը նույնպես քոլեջի համար հետադարձ կապի մեխանիզմ է: Կան հասարակության հետ կապված մեխանիզմներ, բայց դրանց արդյունավետության գնահատման մեխանիզմներ առկա չեն:

ԿՏՊՔ-ն հասարակությանը գիտելիքներ է փոխանցում տարբեր կարճաժամկետ ծրագրերի միջոցով, որոնք նախատեսված են հասարակության տարբեր տարիքային խմբերի համար, օրինակ՝ «Արևային և ջերմային կայանների տեղակայում և շահագործում» (4 ամիս տևողություն), «Հաշվետար» (2 ամիս տևողություն), «Արևային էլեկտրակայանների տեղակայում և շահագործում» (4 ամիս տևողություն) և այլ մասնագիտություններով: Կարճաժամկետ դասընթացների շրջանակներում քոլեջը համագործակցում է մի շարք կազմակերպությունների և կառույցների հետ (GIZ, «Աջակցություն դատապարտյալ» հիմնադրամ, ՀՋՏԿ և այլն):

Դատողություններ: Քոլեջի արտաքին հաշվետվողականության հարցում կարևոր դերակատարություն ունեն ԿԳՄՄՆ-ն և ՄԿՈՒԶԱԿ-ը, ըստ այդմ արտաքին հաշվետվողականության այդ մոտեցումը իրականացվում է համակարգված կերպով:

Չնայած նրան, որ քոլեջում որոշակիորեն ձևավորված է ներքին հաշվետվողականության համակարգ, սակայն այն թույլ չի տալիս ամբողջական պատկերացում կազմել քոլեջի վերաբերյալ, քանի որ բոլոր ստորաբաժանումների աշխատանքները միասնական տեսքով չեն երևում քոլեջի հաշվետվության մեջ, դրանք որոշակիորեն երևում են ամբիոնների կողմից ներկայացված հաշվետվությունների մակարդակով, որտեղ նշում է կատարվում նախապես պլանավորված գործընթացի կատարման վերաբերյալ: Հաշվետվությունները քոլեջի կողմից չեն հրապարակվում, որը կարող է հանգեցնել քոլեջի աշխատանքների ոչ թափանցիկ լինելուն:

ԿՏՊՔ-ի բոլոր ստորաբաժանումների աշխատանքների պլանավորումն ու հաշվետվությունների կազմումը՝ ըստ ՌԾ նպատակների, հնարավորություն կտա բոլոր շահակիցներին շարունակաբար գնահատել քոլեջի ՌԾ-ով սահմանված խնդիրների իրականացումը, ձեռքբերումները և անհաջողությունները:

Քոլեջում առկա են տեղեկատվության փոխանցման մի շարք մեխանիզմներ (պաշտոնական կայքէջ, ֆեյսբուքյան էջեր և այլն), սակայն այնտեղ եղած տեղեկատվությունը բավականին սահմանափակ է: Պաշտոնական կայէջի ակտիվացումը և հասարակությանը հնարավորինս շատ տեղեկատվություն փոխանցելը քոլեջի և իրականացվող Կրթական ծրագրերի վերաբերյալ հնարավորություն կտա քոլեջին բարձրացնել իր վարկանիշը, արդյունքում ձեռք բերել ավելի շատ վստահություն գործատուների, դիմորդների և այլ շահակիցների շրջանում:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ քոլեջը հասարակության տարբեր խմբերի համար իրականացնում է մի շարք կարճաժակետ ծրագրեր, որոնց միջոցով

համագործակցում է նաև մի շարք կազմակերպությունների, այս ծրագրերի շարունական լինելը կնպաստի նոր գործընկերների ձեռքբերմանը և քոլեջի դրական կերպարի ձևավորման ամրապնդմանը:

Եզրահանգում՝ հաշվի առնելով, որ ԿՏՊՔ-ում ձևավորված է ներքին և արտաքին հաշվետվողականության որոշակիորեն ձևավորված համակարգ, տեղեկատվության հասանելիության մեխանիզմներ հասարակությանը, հասարակությանը գիտելիքի փոխանցման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԿՏՊՔ-ն բավարարում է 8-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն՝ ԿՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Ըստ ԿՏՊՔ-ի 2015-2020 թթ. ռազմավարության՝ քոլեջը զարգացնում է տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժը, նախանշելով համագործակցության բնագավառները:

Քոլեջը չի ունեցել և չունի առանձին արտաքին կապերի քաղաքականություն և ընթացակարգեր: Բացակայում են միջազգանացման և միջազգային համագործակցության ուղղությամբ կանոնակարգող փաստաթղթերը, ինչպես նաև միջազգային փորձի ներդրման և փոխանակման գործընթացները կարգավորող դրույթները:

Քոլեջը արտաքին համագործակցության և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքներ չունի: Արտաքին համագործակցության ապահովման գործընթացներն իրականացնում է տնօրենը՝ գործընկերներ ներգրավելու միջոցով (ուսանողների ուսումնաարտադրական և նախավարտական պրակտիկաների անցկացման, ներդրումների համար), և կարիերայի կենտրոնը՝ համագործակցելով գործատուների, տարածքային զբաղվածության կենտրոնի և այլ կազմակերպությունների հետ: Համագործակցությունները հիմնականում ձևավորվում են անձնական կապերի հենքով:

Ուսանողների փորձի փոխանակման, զարգացման, կրթական, հետազոտական գործընթացն իրականացնելու նպատակով ՄՈՒՀ-ը համագործակցում է տարածաշրջանում գործող նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, ինչպես նաև ձեռնարկատիրական շուրջ 13 կազմակերպությունների հետ: Կան մասնագիտություններ, որոնց շրջանակում քոլեջը չի համագործակցում գործատուների հետ, ինչը ուղղակի կերպով անդրադառնում է պրակտիկաների շրջանակում նախատեսված վերջնարդյունքների վրա:

2013 թ.-ից ՄՈՒՀ-ը համագործակցում է Մասնագիտական կողմնոշման մեթոդական կենտրոնի հետ, ինչը հնարավորություն է տալիս ստանալ անհրաժեշտ մեթոդական և

անհրաժեշտ որոշ ռեսուրսային օժանդակություն (վերապատրաստումներ, մեթոդական ուղեցույցներ և ձեռնարկներ):

ԿՏՊՔ-ն ԳՄՀԸ-ի կողմից իրականացվող «Մասնավոր հատվածի զարգացում Հարավային Կովկասում» համալիր ծրագրի հիմնական շահառուներից է, ինչի արդյունում քոլեջում ներդրվել են տարածաշրջանում պահանջարկ ունեցող մի շարք կարճաժամկետ և երկարաժամկետ կրթական ծրագրեր՝ երկակի ուսուցման մոդելով (Դուալ):

2019 թ.-ին ԿՏՊՔ-ի տնօրենը մասնակցել է Գերմանական «ՄԿՈՒ–համագործակցություն» ծրագրին, որի արդյունքում, հաշվի առնելով գործատուների կարիքներն ու պահանջները մասնագիտական կադրերի նկատմամբ, ձեռք են բերվել նոր գործընկերներ:

2020 թ.-ին ԿՏՊՔ-ն ՀՀ ԿԳՄՄՆ և եվրոպական կրթական հիմնադրամի կողմից ընտրվել է «Գերազանցության ցանց»-ի անդամ, ինչի արդյունքում քոլեջը նպատակ ունի կապ հաստատել նմանօրինակ եվրոպական ՄՈՒՀ-երի հետ և իրականացնել փորձի փոխանակման ծրագրեր:

Քոլեջը համագործակցում է ՈԱԱԿ-ի, GIZ-ի և Save the children-ի հետ, ինչի արդյունքում դասախոսները հնարավորություն են ստացել վերապատրաստումների մասնակցելու (մանրամասն՝ 5-րդ չափանիշում):

Բացակայում են առաջավոր (տեղական կամ միջազգային) փորձի ուսումնասիրման, ներդրման և փոխանակման մեխանիզմները, առկա չեն ուսումնասիրություններ նաև համապատասխան մասնագիտությունների ուղղությամբ:

Քոլեջում խնդիր են համարում մասնագիտական օտար լեզուներ տիրապետող դասավանդողների սակավությունը, սակայն բացակայում են միջազգային փոխանակման և հետազոտական ծրագրերն ու այդ ուղղությամբ համաձայնագրերը, միաժամանակ այս ուղղությամբ հնարավորությունների ուսումնասիրություն չի իրականացվում: Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ առկա չեն նաև դասավանդողների օտար լեզվի իմացությանն ուղղված միջոցառումներ կամ աջակցման ու խրախուսման քաղաքականություն: Ուսանողների օտար լեզվի իմացությունն ապահովվում է կրթական ծրագրով նախատեսված դասընթացների շրջանակում:

Քոլեջը համագործակցում է նաև քոլեջների և բուհերի հետ: Համագործակցության արդյունավետության գնահատման մեխանիզմներ չկան: Տվյալ համագործակցությունները միտված չեն դասախոսների մասնագիտական հմտությունների զարգացմանը և չեն բխում նրանց կարիքներից:

Դատողություններ: Դրական է այն, որ ԿՏՊՔ-ն արժևորում է տարածաշրջանային և միջազգային համագործակցությունը՝ ըստ ռազմավարության: Քոլեջը համագործակցում է մի շարք հաստատությունների և կազմակերպությունների հետ, սակայն արտաքին կապերի ուղղությունն ու քաղաքականությունը սահմանված չէ քոլեջի կողմից և չի բխում քոլեջի առաջնահերթություններից ու կարիքներից: Միաժամանակ առկա չեն այդ գործընթացների ընթացակարգային դրույթներ: Ազգային և միջազգային մակարդակներում առկա չէ արտաքին կայուն կապերի զարգացման իրատեսական տեսլական, մյուս կողմից քոլեջը հատկացնում է խիստ սահմանափակ ռեսուրսներ ոլորտի կարգավորման համար, ներկայիս գործող ներքին կառույցները բավարար չեն ԿՏՊՔ-ի արտաքին կապերի և միջազգայնացման հավակնոտ նպատակներն իրականացնելու համար: Հաստատվող համագործակցությունը հիմնված է անձնական կապերի վրա, չի պայմանավորվում ինստիտուցիոնալ կապերով, ինչը չի երաշխավորում դրանց շարունակականությունը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ քոլեջը համագործակցում է տարածաշրջանային գործատուների հետ՝ նպատակ ունենալով այն ծառայեցնելու

ուսանողների փորձի փոխանակման, զարգացման, կրթական, հետազոտական գործընթացն իրականացնելու նպատակով: Սակայն կարևոր է, որ այդ համագործակցությունը լիարժեք կերպով ապահովի իրականացվող բոլոր կրթական ծրագրերով նախատեսված պրակտիկաներով նախատեսված շրջանակը՝ միաժամանակ ապահովելով ուսանողների առավել ակտիվ ներգրավվածությունը պրակտիկաների շջանակում: Մտահոգիչ է այն, որ կան կրթական ծրագրեր, որոնց հետ կապված առկա չէ համագործակցություն գործատուների հետ: Ավելին, կարծում ենք նպաստավոր կլիներ, եթե համագործակցության ոլորտն ընդլայնվեր և ներգրավվեին նաև դասավանդողները՝ հնարավորություն ստանալով կատարելագործելու իրենց պրակտիկ կարողություններն ու հմտությունները: Միաժամանակ փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ պրակտիկաների ժամանակ ուսանողները հիմնականում պասիվ պրակտիկա են անցնում, լիարժեք կերպով չեն ներգրավվում գործընթացի մեջ, չեն կիրառվում գործատուների ռեսուրսները և դրանք չեն ծառայեցվում ուսանողների մոտ պրակտիկ հմտությունների ձևավորմանը: Բացի այդ, դասախոսները և ուսանողները ունեն փորձի փոխանակման պակաս:

Կարևոր է, որ որոշ համագործակցությունների արդյունքում դասախոսները ստանում են վերապատրաստվելու հնարավորություն, սակայն դրանք չեն ապահովում հիմնական կարիքները, միաժամանակ կարևոր է դասախոսներին փորձի փոխանակման հնարավորությունների ընձեռումը՝ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ազգային (միջազգային) հաստատությունների հետ համագործակցության շրջանակներում:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի կողմից համագործակցության արդյունքում երկարաժամկետ և կարճաժամկետ դուալ ծրագրերի իրականացումը:
Փորձագիտական խումբը կարծում է, որ քոլեջի ղեկավարությանը պետք է մտահոգի այն հանգամանքը, որ բացակայում են առաջավոր (տեղական կամ միջազգային) փորձի ուսումնասիրման և դրանք արդյունավետորեն կիրառման փորձը, ինչպես տարբեր գործընթացների, այնպես էլ, և հատկապես, համապատասխան մասնագիտությունների ուղղությամբ:

Չնայած մասնագիտական օտար լեզուների իմացության խնդրի առկայությանը քոլեջում, կարծում ենք նախ դրա անհրաժեշտությունն առաջացնող միջավայր և քաղաքականություն առկա չէ ԿՏՊՔ-ում, քանի որ նախ բացակայում են միջազգային փոխանակման և հետազոտական ծրագրերն ու այդ ուղղությամբ համաձայնագրերը, ավելին չունեն տեղեկատվություն նման հնարավորությունների վերաբերյալ:

Միաժամանակ արտաքին համագործակցությանն ուղղված գործունեության արդյունավետությունը չի չափվում, առկա չեն մեխանիզմներ, և դրան խոչընդոտում է նաև հստակ նպատակայնության և պլանավորման բացակայությունը:

Եզրահանգում: Նկատի ունենալով, որ, չնայած ռազմավարությամբ նախանշված՝ արտաքին կապերի և միջազգայնացման հավակնոտ նպատակներին, ԿՏՊՔ–ում առկա չէ արտաքին կապերի հստակ քաղաքականություն, իրականացման ընթացակարգեր և բավարար ռեսուրսներ, բացակայում են արտաքին համագործակցության հաստատման ինստիտուցիոնալ կապերը, հաստատված համագործակցության շրջանակները չեն ապահովում կրթական ծրագրով և դասախոսների կարիքներով պայմանավորված անհրաժեշտությունները՝ գործնական կարողությունների և հմտությունների, ինչպես նաև փորձի փոխանակման ու հետազոտությունների իրականացման առումով, բացի այդ առկա չեն առաջավոր փորձի ուսումնասիրման մեխանիզմներ և նախադեպեր, միաժամանակ քայլեր չեն ձեռնարկվել միջազգային փոխանակման և հետազոտական ծրագրերի առումով նույնիսկ

հնարավորությունների ուսումնասիրման տեսանկյունից՝ փորձագիտական խումբը եզրակացում է, որ ԿՏՊՔ-ն չի բավարարում չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԿՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Առկա է ԿՏՊՔ-ի «Որակի ապահովման կենտրոնի քաղաքականություն», «Որակի ապահովման կենտրոնի կանոնակարգ» և «Հարցումների անցկացման կանոնակարգ» փաստաթղթերը, որոնք հաստատվել են 2018 թ.-ի փետրվարի 16-ին: Ըստ առաջին երկու փաստաթղթերի. Որակի ապահովման կենտրոնը պատասխանատու է որակի ապահովման քաղաքականության և հայեցակարգի բարելավմանն ուղղված առաջարկների ուսումնասիրության, կանոնակարգային, ընթացակարգային, չափորոշիչ-փաստաթղթերի և առարկայական (մոդուլային) ծրագրերի վերանայման, քննարկման ու ուսումնամեթոդական խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար: Այդ փաստաթղթերը չեն հստակեցնում տարբեր օղակների դերակատարությունը որակի ապահովման գործընթացում: Վերջին փաստաթուղթը սահմանում է հարցումների անցկացման մոտեցումները, ուսումնասիրման ուղղությունները, գործընթացի փուլերը:

Որակի ապահովման կենտրոնը կազմված է ղեկավարից, աշխատանքային և ուսանողական խմբերից, անհրաժեշտության դեպքում նաև ժամանակավոր խմբերից: Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ աշխատանքային և ուսանողական խմբերը դեռևս նոր են ձևավորվելու: Որակի ապահովման կենտրոնը մարդկային ռեսուրսների խնդիր ունի, ինչը նշանակում է, որ այս խմբերի ձևավորումը հրատապ խնդիր է: Փաստաթղթերում սահմանվում են որակի ապահովման կենտրոնի ղեկավարի, աշխատանքային խմբերի և ուսանողական խմբի գործառույթները, որոնք ընդհանրական ձևակերպումներով են և դեռևս պարզ չէ ինչպես են իրագործվելու (մասնավորաբար ուսանողական խմբի գործառույթներից է մշտադիտարկման մեթոդիկայի մշակմանն աջակցելը, սակայն հստակ չէ, թե ինչ գործընթացների մշտադիտարկման մասին է խոսքը և որևէ դրույթով հստակցված չէ, թե այդ մշտադիտարկման մեթոդիկայի մշակումը որ օղակը պետք է իրականացնի):

Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ նաև, որ որակի ապահովման համակարգը գլխավորապես նույնացվում է որակի ապահովման կենտրոնի հետ: Ըստ այդմ,

նախատեսվում է, որ հետագայում ամբիոնները հաշվետու պետք է լինեն կենտրոնին: Կենտրոնը նախատեսում է դասալսումների իրականացման գործընթաց նախաձեռնել, սակայն որևէ առանձնակի նպատակ չի նշվում ի տարբերություն ամբիոնների կողմից արդեն իրականացվող դասալսումների: Կենտրոնի կողմից դեռևս փաստաթղթեր չեն մշակվել: Նախատեսում են ներդնել կուրսղեկների գործունեության կանոնակարգ, սակայն դեռևս հստակեցված չէ, թե ինչ հարց պիտի հստակեցնի ու կանոնակարգվի փաստաթղթով:

ԿՏՊՔ-ում 2020 թ.-ի օգոստոսի 18-ին ներդրվել է առարկայական (մոդուլային) ծրագրերի վերանայման, մշակման և հաստատման կանոնակարգը, ըստ որի նախատեսվում է, որ պարբերաբար իրականացվելու է ծրագրերի արդյունավետության գնահատում, սակայն ներկայացված չեն արդյունավետության գնահատման չափանիշներն ու ցուցիչները, ինչպես նաև գործընթացի իրականացման ընթացակարգը:

Որակի ապահովման կենտրոնի գործունեության համար 2020-2021 ուստարում մշակվել է աշխատանքային պլան, որը գլխավորապես արտահայտում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացի իրականացման պլանավորումը, նաև մի քանի այլ գործընթաց, որտեղ ևս առկա են ընդհանրական ձևակերպումներ, մասնավորաբար՝ թույլ կողմերի հաղթահարման ուղիների մշակում, քոլեջի գործունեության մշտադիտարկման և գնահատման մեխանիզմների մշակում և այլն):

Քոլեջի 3 աշխատակից վերապատրաստում են անցել ՈԱԱԿ-ում, նրանցից երկուսը ընդգրկված են ՈԱԱԿ-ի կողմից ձևավորված փորձագիտական խմբերի աշխատանքներում:

Ուսանողների որակի ապահովման համակարգում ներգրվվածությունն արտահայտվում է կառավարման խորհրդում ներգրավվածությամբ և հարցումներին մասնակցությամբ: Դասախոսների որակի ապահովման համակարգում ներգրավվածությունն արտահայտվում է կառավարման, մանկավարժական, տնօրինական, ուսումնամեթոդական խորհուրդներում ներգրավվածությամբ: Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ ուսանողներն ու դասախոսները նախաձեռնողականություն չեն ցուցաբերում քոլեջի ուսումնական ծրագրերի, ուսումնական և այլ գործընթացների բարեփոխումներում մասնակցություն ցուցաբերելու հարցում:

Քոլեջի սոցիալական գործընկերների ներգրավվածությունը որակի ներքին ապահովման համակարգում արտացոլվում է վերջիններիս ընդգրկվածությամբ Կառավարման խորհրդում: Գործատուների հետ հետադարձ կապի հնարավորություն ընձեռվում է պրակտիկաների ժամանակ և որոշակիորեն ամփոփիչ ատեստավորման ժամանակ, սակայն գործատուները ակտիվություն չեն ցուցաբերում այդ մեխանիզմներով առկա խնդիրները վեր հանելու համար: Առկա են դեպքեր, երբ գործատուների կողմից որոշ խնդիներ կամ առաջարկություններ ներկայացվել են տնօրենին, ինչը նոր ՄԿԾ-ի կամ կարճաժամկետ դասընթացի ներդրման հիմք է հանդիսացել: Գործատուները չեն մասնակցում հարցումների, քննարկումների: Շրջանավարտները ներգրավված չեն որակի ապահովման գործընթացներում:

Ինչպես նշեցինք, վերոնշյալ փաստաթղթերը չեն ապահովում որակի ապահովման ներքին համակարգի սահմանումն ու դրա ներդրումը, հստակեցված չէ դրա տեսլականը, միաժամանակ բացակայում է որակի ապահովման մեխանիզմների և ընթացակարգերի ներդրմանն ուղղված բենչմարքինգը, չկան որակի ապահովման համակարգի արդյունավետության գնահատման մոտեցումներ և մեխանիզմներ:

Առկա են արտաքին և ներքին հաշվետվողականության որոշ մեխանիզմներ, որոնք սակայն չեն պարունակում վերլուծություններ և գործընթացների արդյունավետության գնահատման մոտեցումներ: ԿՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության իրականացման գործընթացում ներգրավված չեն արտաքին

շահակիցներ և ուսանողներ: Ինքնավերլուծության վերլուծական բաղադրիչը չափազանց թույլ է արտահայտված և չի հանգեցնում քոլեջի կարևոր խնդիրների վերհանմանը: Առկա են խնդիրներ չափորոշիչների հստակ մեկնաբանման և տեղեկատվության լիարժեք տրամադրման, ինչպես նաև տվյալների հավաքագրման արդյունավետության առումով: Ինքնավերլուծության իրականացման գործընթացը թույլ է տվել կազմակերպիչներին (քոլեջին) ենթադրել, որ ավելի շատ քննարկումների անհաժեշտություն կա, քանի որ դա թույլ է տալիս բացահայտել խնդիրները:

Որակի ապահովման կենտրոնը հարցումներ է իրականացնում ուսանողների և դասախոսների շրջանում: Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ հարցումները բավարար չեն ուսումնասիրությունների և խնդիրների լիարժեք վերհանման համար, սակայն դեռևս չեն հստակեցրել, թե հավելյալ ինչ մոտեցումներ ներդնեն: Դասընթացի գնահատման հարցումների արդյունքներն ամփոփվում են համընդհանուր միջին միավորի տեսքով: Այդ հարցումները դեռևս ազդեցություն չեն ունենում կառավարման գործընթացում:

Դատողություններ: Որակի ապահովման կենտրոնի քաղաքականության ընդհանրական լինելը թույլ չի տալիս հստակ ձևավորել քոլեջում որակի ապահովման համակարգը և հստակեցնել տարբեր օղակների դերակատարությունը որակի ապահովման գործընթացում: Անհստակ է Որակի ապահովման կենտրոնի դերը և առաքելությունը. այժմ կենտրոնի աշխատանքները պայմանավորված են միայն պատասխանատուի գործունեությամբ, աշխատանքային և ուսանողական խմբերը դեռևս նոր են ձևավորվում, առկա խիստ սահմանափակ գործունեությունն էլ էական ազդեցություն չունի քոլեջում և նրա ստորաբաժանումներում տեղի ունեցող գործընթացների վրա, միաժամանակ խնդրահարույց է կենտրոնի տեսլականի պատկերացումները, քանի որ կենտրոնին վերապահվելու է միաժամանակ և՛ վերահսկողի, և՛ կանոնակարգային, ընթացակարգային, չափորոշիչ-փաստաթղթերի, և՛ առարկայական ծրագրերի վերանայման, քննարկման ու ուսումնամեթոդական խորհրդի հաստատմանը ներկայացնողի պատասխանատուի դերակատարություն: Այս ամենը վտանգում է քոլեջում որակի մշակույթի ձևավորման գործընթացը:

Դրական է այն, որ ԿՏՊՔ-ի աշխատակիցները զարգացնում են որակի ապահովման գործընթացների վերաբերյալ իրենց գիտելիքներն ու հմտությունները, սա կարող է ծառայել քոլեջում որակի մշակույթի տարածմանը և տարբեր գործընթացների բարելավմանը:

Պայմանավորված այն հանգամանքով, որ կենտրոնի գործունեությունը, դեռևս հստակեցված չէ, չի իրականացվել նաև կենտրոնի կարիքների գնահատում:

Ներքին շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներին բավական թույլ է արտահայտված, իսկ արտաքին շահակիցների ներգրավման ինստիտուցիոնալ գործուն մեխանիզմներն են բացակայում, նրանց ներգրավվածությունն արտահայտվում է միայն խիստ լոկալ կերպով: Այս ամենը նշանակում է, որ շահակիցների շարունակական ակտիվ ներգավման հստակ մեխանիզմներ դեռևս չեն կիրառվում:

Որակի ապահովման համակարգը դեռևս ձևավորման փուլում է, սակայն այս առումով նաև համեմատական վերլուծություն կամ կարիքների ու հնարավորությունների գնահատում չի իրականացվել, և առկա չեն որակի ապահովման համակարգի արդյունավետության գնահատման մեխանիզմներ: Միաժամանակ երաշխավորված չէ ԿՏՊՔ-ում կատարվող գործընթացների որակի մասին տեղեկատվության հասանելիությունը ներքին և արտաքին շահակիցների համար:

Դրական է այն, որ ԿՏՊՔ-ում առաջնորդվում են միջին մասնագիտական կրթական ծրագրերին ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից ներկայացվող պահանջներով և ՊԿՉ-ներով: ԿՏՊՔ-ի ընթացիկ հաշվետվություններում վերլուծությունների բացակայությունը և տվյալների

հավաքագրումն ու վերլուծումը հանգեցրել է ինքնավերլուծության իրականացման դժվարությունների, այստեղ ևս վերլուծական բաղադրիչը խիստ թույլ է արտահայտված: Այս ամենը դժվարություններ է ստեղծում արտաքին գնահատման ժամանակ:

Որակի ապահովման կենտրոնը փորձում է որոշ ուսումնասիրություններ անել հարցումների միջոցով, սակայն դրանց արդյունքները չեն ենթարկվում խորը վերլուծության՝ ուղղված պատճառների բացահայտմանը և հետագա բարելավումների իրականացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ որակի ներքին ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը դեռևս լիարժեք մշակված և ներդրված չեն, որակի ապահովման կենտրոնի առաքելությունն ու տեսլականը դեռևս հստակեցման անհրաժեշտություն ունի, ներքին և արտաքին շահակիցների ոչ բավարար ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներին, որակի ապահովման համակարգի արդյունավետության գնահատման մեխանիզմների բացակայությունը, ԿՏՊՔ-ի գործընթացների արդյունավետության ուսումնասիրման և վերլուծությունների խիստ պակասը, ինչպես նաև դրանց որակի վերաբերյալ տեղեկատվության ոչ բավարար հասանելիությունը, տվյալների հավաքագրման ու վերլուծման մեխանիզմների անկատարությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԿՏՊՔ-ի որակի ապահովման ներքին համակարգը բավարար չափով չի նպաստում ԿՏՊՔ-ում որակի մշակույթի ձևավորմանն ու գործընթացների շարունակական բարելավմանը:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԿՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում և վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Չի բավարարում**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Չի բավարարում**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

_____

Արմենուհի Սարգսյան
Փորձագիտական խմբի ղեկավար

03.02.2021 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմենուհի Սարգսյան՝ 2006 թ.-ին ավարտել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը՝ «Մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2011 թ.-ին շնորհվել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2007-2011 թթ. եղել է Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի «Մաթ. անալիզ և դիֆ. հավասարումներ» ամբիոնի դասախոս, 2011-2014 թթ.՝ նույն ամբիոնի ասիստենտ, 2014-2017 թթ.՝ «Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի դոցենտ: 2018 թ.-ից Շիրակի պետական համալսարանի Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրենն է: Մի շարք գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ է:

Քրիստինե Մարտիրոսյան՝ 2010թ.-ին ավարտել է վաղաշենի միջնակարգ դպրոցը: 2010-2014թթ. սովորել և ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը՝ ստանալով ուսուցիչ-մանկավարժի բակալավրի աստիճան «ինֆորմատիկա և կիրարական մաթեմատիկա» մասնագիտությամբ: աշխատում է գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջում և համատեղության նաև Մարտունու Մ.Մելիք Շահումյանցի անվան N 1 հիմնական դպրոցում:

Հակոբ Գալստյան՝ 1985թ-ին ընդունվել եմ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեքենաշինական ֆակուլտետ, 1992թ.-ին ավարտել է ինստիտուտը և ստացել ինժեներ-մեխանիկի դիմպլոմավորված մասնագետի որակավորում: 1992-2000թթ. աշխատել է ՀՀ նյութատեխնիկական ռեսուրսների նախարարության «Հայէլեկտրոմեքառ» միավորումում որպես ինժեներ –մեխանիկ: 1997-2002թթ. աշխատել է Մասիս քաղաքի թիվ 3 միջնակարգ դպրոցում որպես ուսուցիչ: 2007թ-ից աշխատում է Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջում որպես ճարտարագիտական ամբիոնի դասախոս, ապա 2009թ-ից մինչ օրս ղեկավարում է նույն քոլեջի ճարտարագիտական ամբիոնը: Դասախոսում է «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» և «տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտությունների համապատասխան կուրսերում:

Ջուլյա Բաղալյան՝ 2009-2019թթ. սովորել և ավարտել է ք. Արտաշատի Հ. Թումանյանի անվան հիմնական դպրոցը: 2019թ.-ից մինչ օրս սովորում է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ: 2019թ-ին մասնակցել է LIT ամառային դպրոցին: 2020թ.-ին մասնակցել է ՈԱԱԿ-ի «ՈՒսանողության ձայն» նախագծի կողմից կազմակերպված ուսանող փորձագետի դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

24.11.2020թ.-27.11.2020թ.

	24.11.2020թ	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	9:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում քոլեջի փոխտնօրեն/ների հետ	11:00	11:50	60 րոպե
3.	Հանդիպում քոլեջի խորհրդի անդամների հետ	12:30	13:20	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
5.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	14:45	15:45	60 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:30	120 րոպե

	25.11.2020թ	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ամբիոնի վարիչների հետ /ներառյալ ինքնավերլուծությունում ներկայացված երեք ՄԿԾ-ներ պատասխանատուները/	9:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (ներառյալ 3 ՄԿԾ- Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում ները)	11:00	12:00	60 րոպե
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
4.	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	13:45	14:45	60 րոպե
5.	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների հետ	15:15	15:55	40 րոպե
6.	Հանդիպում ուսանողների ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	16:30	17:30	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:00	19:00	60 րոպե

	26.11.2020թ.			*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Զուգահեռ հանդիպում. Հաշվողական տեխնիկայի և	Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝	Փոխադրումների կազմակերպում և Կառավարում տրասպորտում»	9:30	11:00	90 րոպե

	ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում ՄԿԾ պատասխանատուների և դասախոսների հետ	օտար լեզվի խորացված իմացությամբ ՄԿԾ պատասխանատուների և դասախոսների հետ	(ըստ տրասպորտի տեսակների) ՄԿԾ պատասխանատուների և դասախոսների հետ			
2.	Զուգահեռ հանդիպում. Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում ՄԿԾ ուսանողների հետ (8-10 հոգի)	Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ ՄԿԾ ուսանողների հետ (8-10 հոգի)	Փոխադրումների կազմակերպում և Կառավարում տրասպորտում» (ըստ տրասպորտի տեսակների)ՄԿԾ ուսանողների հետ (8-10 հոգի)	12:00	13:00	60 րոպե
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:15	14:15	60 րոպե
5.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ(կադրերի տեսուչ, հանրակրթության բաժնի վարիչ, պրակտիկայի վարիչ, հաշվապահ, իրավախորհրդատու, գրադարանավար, կարիերայի ուղղորդման պատասխանատու, դուալ կրթական ծրագրերի ղեկավար)			14:30	15:30	60 րոպե
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն			16:30	18:30	120 րոպե

	27.11.2020թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատու/ների հետ	9:30	10:30	60 րոպե
2.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	11:00	11:40	40 րոպե
3	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:20	13:20	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
5.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	15:00	16:00	60 րոպե
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16: 00	17: 00	60 րոպե
7.	Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ	17:30	18:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանումը	Չափանիշ
1.	«ՄԿՈՒ համակարգում իրականացված բարեփոխումների արդյունքների գնահատում» ձևաթղթեր	1
2.	«ՄԿՈՒ համակարգում իրականացված բարեփոխումների արդյունքների գնահատում» ձևաթղթեր/հաշվետվության գնահատման արձագանք/գնահատական ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից	1
3.	Նիստերի արձանագրություններ /երեքական օրինակ յուրաքանչյուր ստորաբաժանումից/	2
4.	Հաշվետվություններ /վերջին երեք տարվա ամբիոնների, ստորաբաժանումների	2
5.	Տարբեր ստորաբաժանումների տարեկան պլանների օրինակներ /վերջին երեք տարվա ստորաբաժանումների համար/	2
6.	Ամբիոնների աշխատանքային, կիսամյակալին պլաններ, հաշվետվություններ	2
7.	Ամբիոների վարիչների աշխատանքային նկարագրեր	2
8.	Կարիերայի կենտրոնի քաղաքականություն-/ կանոնակարգ	2
9.	Կարիերայի կենտրոնի տարեկան աշխատանքային պլաններ և հաշվետվություններ	2
10.	Քոլեջի հաշվոտվություն/ֆինանսական/	2
11.	Դասացուցակներ /բոլոր դասացուցակներ/	3
12.	Ավարտական աշխատանքներ /յուրաքանչյուր երեք ՄԿԾ-ից երեքական օրինակ/ դիզայն, հաշվողական տեխնիկա	3
13.	ՈՒսանողների անհատական աշխատանքներ	3
14.	Ավարտական հանձնաժողովների նախագահների հաշվետվություններ, կարծիքներ- /վերջին երեք տարիներ/	3
15.	Դասամատյաններ /վերջին երեք տարվա ամեն կուրսից մեկական օրինակ/	3
16.	Դասալսումների արձանագրություն կամ փաստաթուղթ, որտեղ ներկայացված են դասալսումների արդյունքները և վեր հանված խնդիրները:	3
17.	ՈՒսանողների կողմից ուսումնառության մեթոդներից գոհունակություն/հարցումներ, վերլուծություններ	3
18.	Ամբիոնների արձանագրություններ, որտեղ արծածված են փոխադարձ դասալսումների արդյունքներ	3
19.	2012 թվականին այլ ուս. հաստատությունների հետ կնքված մտադրությունների հուշագրեր	3
20.	Առարկայական ծրագրերում/մոդուլներում կատարած փոփոխությունների հիմքեր և հիմնավորումներ/արձանագրություններ/	3
21.	Աշխատաշուկայի ուսումնասիրություններ և վերլուծություններ քոլեջի կողմից	3
22.	Պրակտիկաների լրացրած օրագրեր /յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար երկուական օրինակ/	3

23.	ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ՄԿԾ-ների մասնագիտական առարկաների հանձնարարականների ցանկը և մի քանի օրինակներ, որոնք տրվում են առաջին և երկրորդ միջանկյալի և ամփոփիչ քննությունների ժամանակ	3
24.	ՈՒսանողների մասնագիտական կողմնորոշման թեստ	4
25.	Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալներ	4
26.	Դիմորդների թիվ, մասնագիտությունների տեղերի քանակ ըստ տարիների, ցուցանիշներ վերջին 3 տարիների, բոլոր մասնագիտություններով	4
27.	Ընդունելության քննությունների չափանիշներ, ընդունելության հարցաշարերի օրնակներ/բժշկական մասնագիտություններ/	4
28.	Կարիերայի աշխատանքային պլան և իրականացվող ծրագրերի փաթեթներ	4
29.	Շրջանավարտների շրջանում հարցումների հարցաթերթի օրինակ և արդյունքների վերլուծություններ	4
30.	Կուրսղեկի աշխատանքային պլաններ	4
31.	Դասախոսների ընտրության մրցույթի իրականացման համապատասխան արձանագրություններ;	5
32.	Դասալսումների մատյաններ /վերջին երեք տարվա համար/	5
33.	Վերապատրաստված դասախոսների ցանկ	5
34.	Դասախոսների պաշտոնի նկարագրեր	5
35.	ՈՒսումնաօժանդակ կազմի ընտրության կարգ(ներքին կարգապահական կանոններ)	5
36.	Մանկավարժական խորհրդի նիստի արձանագրություններ	5
37.	Դասախոսների գնահատման հարցաթերթիկ և վերլուծություններ	5
38.	Դասախոսի ընտրության գնահատման չափանիշներ	5
39.	Վերապատրաստվողների անվանացանկ, ժամանակցույց, ցուցանիշներ ըստ տարիների/վերջին 3 տարիների/	5
40.	Դասախոսական կազմի կարիքների վերհանման հիմքեր	5
41.	ԿՏՊՔ-ի 5 դասախոսների մասնագիտական ուսումնական ձեռնարկներ	5
42.	Վարչական և ուսումնաօժանդակ աշխատողների աշխատանքի, ստորաբաժանումների արդյունավետությունը գնահատող հարցումներ և դրանց վերլուծություններ	5
43.	ՈՒսանողների զոհունակությունը ԿՏՊՔ-ի ռեսուրսներից, հարցումներ, վերլուծություններ	7
44.	Հաստիքացուցակ վերջին տարիների/2020/	7
45.	Մասնագիտական կողմնոշման մեթոդական կենտրոնի հետ համագործակցության հիմքեր(Կարիերայի պատասխանատու)	7
46.	Բյուջեի նախագիծ և կատարողական վերջին 3 տարիների	7
47.	Կարճաժամկետ դասընթացների մասնակիցների տվյալներ	8
48.	Վերջին 5 տարիներին նոր համագործակցող հաստատությունների հետ պայմանագրեր	9
49.	Մասնագիտական կողմնոշման մեթոդական կենտրոնում վերապատրաստված դասախոսների ցանկ/կարիերա/	9

50.	ՈԱԿ աշխատանքային պլաններ /2020/	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Համակարգչային սենյակներ
2. Լսարաններ
3. Լաբորատորիաներ
4. Դահլիճ
5. Մարզասրահ
6. Գրադարան
7. Բուժկետ
8. Աշխատասենյակներ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ





Ուսումնաօժանդակ կազմ
Իրավախորհրդատու
Կադրերի տեսուչ
Հաշվապահ
Տնտեսվար
Լաբորանտ
Կարիերայի ոլորտման պատասխանատու
Պահեստապետ
Գրադարանավար
Արխիվավար
Բուժքույր
Մանկավարժ-հոգեբան


Սպասարկող անձնակազմ
Ջեռուցապահ
Ուսումնական մասի քարտուղար
Գործավար
Հաշվետար
Տնօրենի օգնական
Համակարգչային տեխնիկայի սպասարկող
Գնումների համակարգող
Հավաքարար
Պահակ
Բակապահ

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ԿՏՊՔ-Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ
2. ԿԳՄՍՆ- Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն
3. ՈԱԱԿ-Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգայի կենտրոն
4. ՄԿՈՒԶԱԿ- Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
5. ՄԿԾ-Մասնագիտական կրթական ծրագիր
6. ՈՒՕ-ՈՒսումնաօժանդակ կազմ
7. ՈՒԽ-ուսանողական խորհուրդ
8. ՄՈՒՀ-Մասնագիտական ուսումնական հաստատություն
9. ՌԾ-Ռազմավարական ծրագիր
10. ՊԻՍԲ- Պլանավորում, իրականացում, ստուգում, բարելավում
11. ՈԱՇ- Որակավորումների ազգային շրջանակ
12. ՄԿՈՒ- Միջին մասնագիտական կրթություն
13. ՊԿՉ-Պետական կրթական չափորոշիչ
14. ԱԻՆ-Արտակարգ իրավիճակների նախարարություն
15. ՀԶՏԿ- Հրազդանի զբաղվածության տարածքային կենտրոն
16. ԳՄԸՀ- Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության